However, several limitations and biases should be acknowledged. The most important concerns the empirical definition of image quality: the binary distinction between good and bad quality remains subjective, as it relies on human perception of legibility rather than quantifiable measures. This introduces potential inconsistencies in labeling, particularly for borderline cases. Future work should explore the integration of objective indicators, such as contrast, sharpness, or OCR confidence metrics, to make quality assessment more reproducible. A second limitation relates to the restricted dataset size. With fewer than five hundred real samples, the models were trained on a relatively small corpus for deep learning applications. While data augmentation and synthetic transformations helped enrich the diversity of samples, they cannot fully capture the texture complexity, lighting variations, or degradation patterns of genuine historical materials. Increasing both the volume and heterogeneity of the dataset would directly enhance the model's generalization and stability.

The full implementation is open-sourced and available on GitHub. The repository is organized as follows:

- `main.py` orchestrates the full inference workflow and user interface logic;
- `config.py` defines model paths, thresholds, and runtime parameters;
- `models/` contains trained YOLOv11n weights (`quality.pt`, `classify_rotation.pt`, `PageDetectNewspaper_best.pt`);
- `modules/` implements the functional components: `classification.py` (quality/orientation tasks), `detection.py` (page segmentation), `ocr.py` and `llm.py` (optional text processing), `utils.py` (image I/O and transformations), and `load_models.py` (dynamic model loading).

Code availability

Models, inference code and web app are available on Github: <https://github.com/CVidalG/workshop-TUMO2025> All models were trained and tested in Python 3.10 using PyTorch 2.3 on a single NVIDIA T4 GPU, with an average inference time below one second per page. The models can also be executed efficiently on CPU.

Acknowledgments

This paper presents the outcomes of the workshop *Preserving the Past with AI*, held at TUMO Yerevan and led by Calfa⁸ (Chahan Vidal-Gorène and Baptiste Queuche), in collaboration with the National Library of Armenia. We extend our sincere gratitude to the National Library of Armenia for providing high-resolution document samples used for model training and evaluation, as well as for the valuable discussions that helped shape the project's objectives and use cases. Special thanks are also due to the TUMO teams for their support in organizing and facilitating the workshop.

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հետազոտությունը ցույց է տալիս պատմական հայկական թերթերի ավտոմատ նախամշակման համար նախատեսված թեթև և մոդուլային արհեստական բանականության (ԱԲ) հոսքագծի կիրառելիությունն ու արդյունավետությունը: Դասակարգման, հատվածավորման և երկրաչափական ուղղման մեթոդների համադրումը միասնական համակարգում զգալիորեն բարձրացնում է թվայնացված, ձևով ու որակով տարբեր արխիվների օգտագործելիությունը՝ միաժամանակ պահպանելով դրանց վավերականությունն ու բնօրինակ տեսքը:

Աշխատանքը իրականացվել է ԹՈՒՄՈՒ Երևանում անցկացված երկշաբաթյա ուսանողական աշխատարանի շրջանակում, ուստի այն պետք է դիտարկել որպես կրթական բնույթի նախագիծ, այլ ոչ թե որպես ամբողջությամբ պատրաստ արտադրական լուծում: Ստացված հոսքագիծը և մոդելները լիարժեք աշխատունակ են, սակայն ինստիտուցիոնալ թվայնացման գործընթացներում կիրառելուց առաջ անհրաժեշտ են հետագա զարգացումներ և լայնածավալ փորձարկումներ:

Նախագիծը հաստատում է բաց ԱԲ գործիքների մեծ ներուժը մշակութային ժառանգության պահպանման ոլորտում և ցույց է տալիս, որ նույնիսկ սահմանափակ ռեսուրսներով հնարավոր է հասնել բարձր արդյունավետության: Հետագա աշխատանքները կուղղվեն տվյալների շտեմարանի ընդլայնմանը, որակի օբյեկտիվ չափորոշիչների կատարելագործմանը, ինչպես նաև հոսքագծի ինտեգրմանը Հայաստանի ազգային գրադարանի թվային ենթակառուցվածքներում՝ արտադրական մասշտաբով կիրառման նպատակով:

⁸ <https://calfa.fr>

REFERENCES

1. Bermès, E. Le numérique en bibliothèque: naissance d'un patrimoine. L'exemple de la Bibliothèque nationale de France (1997–2019), Paris, École nationale des chartes, 2020.
2. Calfa. hye-calfa-n: Open-Source OCR Model for Armenian, 2025, [Electronic Resource] URL: <https://github.com/calfa-co/hye-tesseract>; 02.11.2025.
3. Gasparini, A.; Kautonen, H. Understanding Artificial Intelligence in Research Libraries – Extensive Literature Review // LIBER Quarterly: Journal of European Research Libraries, 2022, Vol. 32 (1), pp. 1–36, DOI: 10.53377/lq.10934; 02.11.2025.
4. Jolivet, V.; Terriel, L.; Canteaut, O. From Manuscript to Data: An Integrated Pipeline for Handwriting Recognition, Editing, and Indexing. // Journal of Data Mining and Digital Humanities, 2025, [Electronic Resource] URL: <chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://hal.science/hal-05117289/document>, 02.11.2025.
5. Ranjan, A.; Ravinder, M. ROBDD-TrOCRBERTa: A Novel Robust-Optimized Blurred Document Text Deblurring and Completion with DCGAN-TrOCR and DistilRoBERTa. // International Journal of Information Technology, 2024, Vol. 16, № 7, pp. 4611–4619.
6. Rehm, G.; Bourgonje, P.; Hegele, S.; Kintzel, F.; Schneider, J. M.; Ostendorff, M.; Zaczynska, K.; Berger, A.; Grill, S.; Räuchle, S.; et al. QURATOR: Innovative Technologies for Content and Data Curation // arXiv preprint. arXiv:2004.12195, 2020, pp. 1–10. [Electronic Resource] URL: <https://arxiv.org/abs/2004.12195>, 02.11.2025.
7. Karmanov, I.; Deshmukh, A. S.; Vögtle, L.; Fischer, P.; Chumachenko, K.; Roman, Timo, Seppänen, Jarno, Parmar, Jupinder, Jennings, Joseph, Tao, Andrew, et al. Éclair – Extracting Content and Layout with Integrated Reading Order for Documents, 2025, // arXiv preprint arXiv:2502.04223, [Electronic Resource] URL: <https://arxiv.org/abs/2502.04223>, 02.11.2025.
8. Vidal-Gorène, Ch. OCR / HTR Technologies and Armenian Heritage Preservation. // Bulletin of Armenian Libraries, 2023, Vol. 6, № 1, pp. 61–65. [Electronic Resource] URL: <https://journal.nla.am/index.php/banber/article/view/20>, 02.11.2025.
9. Vidal-Gorène, Ch.; Camps, J.-B. Image-to-Image Translation Approach for Page Layout Analysis and Artificial Generation of Historical Manuscripts // Proceedings of the International Conference on Document Analysis and Recognition, 2024, pp. 140–158.
10. Vidal-Gorène, Ch.; Camps, J.-B. Traiter des manuscrits endommagés par le feu grâce à l'augmentation de données par intelligence artificielle: le cas du ms. L.II.14 de Turin (T) // Studi Francesi, Torino, Rosenberg & Sellier, 2025, Vol. 206, pp. 377–383, [Electronic Resource] URL: <https://enc.hal.science/hal-05184196>, 02.11.2025.
11. Vidal-Gorène, Ch.; Decours-Perez, A.; Kasparian, A.; Tanelian, A.; Ohanian, A. Armenian HTR: State of the Art, Transcription Guidelines and Good Practices, 2025, [Electronic Resource] URL: <chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://enc.hal.science/hal-05021697/document>, 02.12.2025.
12. Yang, Zh.; Peng, D.; Shi, Y.; Zhang, Y.; Liu, Ch.; Jin, L. Predicting the Original Appearance of Damaged Historical Documents. // Proceedings of the AAAI Conference on Artificial Intelligence, 2025, Vol. 39, № 9, pp. 9382–9390.
13. Zhang, J.; Peng, D.; Liu, Ch.; Zhang, P.; Jin, L. DocRes: A Generalist Model Toward Unifying Document Image Restoration Tasks // Proceedings of the IEEE/CVF Conference on Computer Vision and Pattern Recognition (CVPR), 2024, pp. 1–10, [Electronic Resource] URL:

https://openaccess.thecvf.com/content/CVPR2024/html/Zhang_DocRes_A_Generalist_Model_Toward_Unifying_Document_Image_Restoration_Tasks_CVPR_2024_paper.html, 02.11.2025.

<https://doi.org/10.52027/18294685-hg.2.25-06>

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

ՖՐԱՆՍԱԳԻՐ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ

Բանալի բառեր՝ Հայաստան, հայ, ցեղասպանություն, բռնագաղթ, Ֆրանսիա, գիրք, Արմեն Լյուբեն, Արթուր Ադամով, Անրի Թրուայա, Վահե Քաչա, Ռուբեն Մելիք, Շարլ Ազնավուր:

Keywords: Armenia, Armenian, genocide, deportation, France, book, Armen Lubin, Arthur Adamov, Henri Troyat, Vahe Katcha, Rouben Melik, Charles Aznavour.

Ներածություն. օտարագիր հայ գրողներ երևույթը

Հայ ժողովրդի պատմական ճակատագրով պայմանավորված՝ ժամանակի ընթացքում ստեղծվել են այնպիսի պայմաններ, որ հայության խոշոր զանգվածներ հեռացել են հայրենիքից և ապաստանել օտար երկրներում:

Որտեղ էլ որ հանգրվանել են հայ ժողովրդի բեկորները, ջանադիր աշխատասիրությամբ ստեղծել են դպրոցներ, հիմնել եկեղեցիներ, տպագրել թերթեր ու գրքեր: Բայց տասնամյակների, երբեմն հարյուրամյակների ընթացքում միշտ չէ, որ հնարավոր է եղել պահպանել մայրենի լեզուն, հավատն ու ազգային պատկանելությունը:

Օտար ժողովուրդների մեջ ձուլվելով հանդերձ՝ հայ ժողովրդի զավակները մնայուն հետք են թողել ոչ միայն այդ երկրների տնտեսության, ռազմական ու դիվանագիտական գործերում, այլև արվեստի ու գրականության ասպարեզում:

Շատ քաղաքներում պահպանվել են հայ ճարտարապետության հետքերը: Ռումինիայում հայտնի են Սուչավա, Յասսի, Հունգարիայում՝ Գեոլա, Եդիսաբեթուպոլիս, Լեհաստանում, ապա Ուկրաինայում՝ Լվով, Կամենեց-Պոդոլսկ, Լուցկ քաղաքները, Ղրիմի ու Բեսարաբիայի առանձին բնակավայրեր, որոնք եղել են նաև հայաշատ կենտրոններ: Ուժացման պայմաններում հայ մտավորականները, չունենալով դրսևորման այլ հնարավորություն, երբեմն ստեղծագործել են օտար լեզվով: Դա տիրապետող է եղել ա՛յն աստիճանի, որ 1884-1885 թթ. Վառնայում լատինատառ հայերեն և ֆրանսերեն հրատարակվել է Եվրոպայի հայ գաղթականության «Հույս» շաբաթաթերթը: Թուրքիայում և հարևան երկրներում 1840-1956 թթ. լույս է տեսել 55 անուն հայատառ թուրքերեն պարբերական, իսկ 38 հայերեն թերթ ունեցել է հայատառ թուրքերեն էջ կամ

ամբողջական տարբերակ: 1960 թ.-ից Նյու Յորքում լույս է տեսել «Արարատ» անգլերեն հանդեսը, որի շուրջ համախմբվել են անգլիագիր հայ գրողներ: Նույնկերպ ռուսագիր հայ գրողներին, ինչպես նաև հայ գրականությունը ռուսերեն ներկայացնելու համար 1958 թ.-ից Երևանում լույս է տեսնում «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագիրը:

Ըստ վիճակագրության՝ մինչև 1980-ական թթ. կեսերն աշխարհում լույս տեսնող 211 հայկական պարբերականներից միայն 107-ն էր հրատարակվում հայերեն: Մնացած 104-ից 74-ը տպագրվում էր հայերենի հետ խառը մեկ այլ լեզվով, իսկ 30-ը՝ օտար լեզվով՝ անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն, ռուսերեն, թուրքերեն, իսպաներեն, պորտուգալերեն, գերմաներեն:

Այս ընթացքում ասպարեզ են եկել հայագրի գրողներ, ովքեր ստեղծագործել են օտար լեզուներով: Տարբեր է նրանց ճակատագիրը. ոմանք, անցնելով օտար լեզվի, իրենց շարունակել են համարել հայ գրող, իսկ ոմանք հեռացել են ազգային արմատներից:

Ք. ծ. ա. I դարում հայոց Արտավազդ Բ արքան հունարեն ողբերգություններ էր գրում, որոնք եթե պահպանվեին, բնականորեն պետք է պատկանեին հայ գրականությանը:

Ամբողջ միջնադարում բուռն ծաղկում էր ապրում աշուղական արվեստը: Աշուղների հիմնական լեզուն թուրքերենն էր: Տասնյակներով են հաշվվում միջնադարի թուրքալեզու հայ աշուղները: Ի վերջո, օտարագիր հայ գրողների մեջ է նաև Սայաթ-Նովան, ով հայերենից բացի գրել է վրացերեն ու թուրքերեն խաղեր:

Ժամանակի ընթացքում ստեղծվել է օտարագիր հարուստ գրականություն, որի հանդեպ հայ գրականագիտությունը պետք է ունենա որոշակի վերաբերմունք և հստակորեն զանազանի թե՛ հայ ազգային ոգին պահպանող ու շարունակող, թե՛ հայ ազգային ոգուց հեռացած այդ գրականությունը:

Չմոռանանք նաև, որ հայատառ թուրքերեն երկեր է մեզ ժառանգել Հակոբ Պարոնյանը: Հայատառ թուրքերեն է մեզ հասել նաև հայ գրականության ուշագրավ վեպերից մեկը՝ Հովսեփ Վարդանյանի «Ագապին» (1851):

Օտարագիր գրականությունն ազգային գրականության համակարգում ընդգրկելը սոսկ հայկական հարց չէ: Ընդհուպ XIX դարը լատիներենն Արևմտյան Եվրոպայում կաթոլիկ եկեղեցու պաշտոնական գրագրության, գիտության, փիլիսոփայության, մասամբ գրականության լեզուն էր:

Էրազմ Ռոտերդամցին, Թոմաս Մորը և շատ ուրիշներ գրել են լատիներեն, բայց նրանք իրենց անփոփոխ տեղն ունեն, մեկը՝ հոլանդական, մյուսը՝ անգլիական գրականության մեջ: Անգլիացի գրող Օսկար Ուայլդն իր «Սալոմե» թատերգությունը գրել է ֆրանսերեն, բայց դա ամենն չի նշանակում, թե այդ երկը դուրս է մղվում անգլիական գրականությունից: Հնդկաստանի բազմալեզու գրականությունն ազգային լեզուներին զուգահեռ ստեղծվել և շարունակում է ստեղծվել նաև անգլերեն: Օտար լեզուներով է ստեղծվել աֆրիկյան ժողովուրդներից շատերի գրականությունը:

Կան նաև երկլեզվյան գրողներ, ովքեր ասպարեզ եկան հատկապես XX դարում: Իրենց ազգային լեզուներին զուգահեռ նրանք գրում են նաև անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, ռուսերեն:

Իսկ ծագումով հայ գրողները շատ են: Հայկական ծագում է վերագրվում ռումինական նոր գրականության հիմնադիր Միհայ Էմինեսկուին (1850-1889): Ռումինիայում հայտնի անուններ են հայազգի Յոն Բարբուն, Յոն Միսիրը, Դան Դեշլքուն, նաև՝ Ալեքսանդրու Շահիկյանը, Վարդան Առաքելյանը, Սևակ Հայրապետյանը, Շտեֆան Հակոբյանը, Անայիս Ներսիսյանը: Հունգարիայում հայտնի են հայազգի թատերագիր Գերգել Չիքին, արձակագիր Մորից Լուկաչը, բանաստեղծ Դուկաս Բադրուպանյանը: Դավիթ Մարտոնը գրել է «Արա Գեղեցիկ» ռոբերգությունը, որը 1896-1897 թթ. լույս է տեսել հունգարահայերի «Արմենիա» հայերեն հանդեսում: Լեհաստանում ապրել և ստեղծագործել են մատենագիր Շիմոն Շիմոնովիչը (գրել է լատիներեն), Անջել Մանդալյանը:

Օտարագրությունը մեծ չափեր ընդունեց հատկապես XX դարում: Ասպարեզ եկան անգլիագիր, ռուսագիր, ֆրանսագիր, իտալագիր, իսպանագիր, բուլղարագիր, ռումինագիր հայ գրողներ: Նրանցից շատերին բնութագրական է Վիլյամ Սարոյանի խոստովանությունը. «Թեև անգլիերեն կը գրեմ ու հակառակ անոր, որ ծնունդով ամերիկացի մըն եմ, ինքզինքս կը նկատեմ հայ գրող մը: Գործածած բառերս անգլերեն են: Միջավայրը, որու մասին կը գրեմ, ամերիկյան է: Ոգին, որ կ'ստիպե ինձ գրել, սակայն, հայ է: Ուրեմն հայ գրող մըն եմ: Խորապես կը սիրեմ հայ գրողներու մեծ ընտանիքին պատկանելու պատիվը» [Հանդիպումներ Ուիլերմ Սարոյեանի հետ, 1978, 118]:

Ազգային ոգու առկայությունը և հայ գրական ընտանիքին պատկանելու ցանկությունը բավարար նախադրյալ են՝ ասելու, որ օտարագիր հայ գրողներից շատերի երկերը պատկանում են նաև հայ գեղարվեստական մտքին: Թեև ազգային գրականության առաջնահերթ նախապայմանը մայրենի լեզուն է, բայց պատմական ճակատագրով իր հայրենիքից տարագրության դատապարտված հայության համար այդ գրականությունը պետք է համարել ազգային գրականության դիմագիծն ամբողջացնող մաս:

Այդ է հուշում օտարագիր հայ գրողի ճակատագիրը: Լեզվի կորստին փոխարինում է ազգային ոգին՝ հավատարմությունը պատմությանը, ժառանգորդական հիշողությունը, ազգային հոգեբանությունը, ավանդույթներն ու սովորույթները: Սա հոգեբանական այլ վիճակ է:

Այս ամենն ուղղակիորեն պահանջում է օտարագիր հայ գրողների վաստակն ազգային-ժողովրդական և համամարդկային ընդգրկումներով դիտել որպես մայր գրականության մի բաղկացուցիչ մասը և օրինաչափ համարել դրա ներգրավումն ազգային կրթության համակարգի մեջ:

Ֆրանսագիր հայ գրողներ

Ֆրանսագիր հայ գրողներն ասպարեզ են իջել XX դարի սկզբից: 1908թ. բելգիական հանդեսներում տպագրվել են Կոստան Զարյանի ֆրանսերեն գրած առաջին բանաստեղծությունները:

1911 թ. Փարիզում «Համաստվածյան» գրական շարժման հիմնադիր է դառնում ԱՐՄԵՆ ՏՈՐՅԱՆ (Հրաչյա Սուրենյան, 1892, Սկոպյե – 1915, Կ. Պոլիս): Հետևորդների հետ

մեկտեղ նա հրատարակում է «Արեն» հանդեսը. Թե՛ այդ, թե՛ ֆրանսիական այլ պարբերականներում նա տպագրում է բազմաթիվ բանաստեղծություններ: Հետագայում նա տեղափոխվել է Կ. Պոլիս, հանդես եկել նաև հայերեն ու հայաշունչ բանաստեղծություններով և վերջում իր գրչակիցների հետ մեկտեղ դարձել 1915 թ. ապրիլյան եղեռնի զոհ: «Անցորդը և իր ճամբան» (1975) գրքում Կոստան Զարյանը մտաբերում է. *«Արմեն Դորյանը, նուրբ և զգայուն բանաստեղծ, ֆրանսիական գրականությունը թողել և վերջին պահին եկել էր մեր «մեհենական» շարժման միանալու»* [Զարյան, 1975, 18]: 1933 թ. տպագրվել է «Մի հայազգի ֆրանսիացի բանաստեղծ» ժողովածուն, որի մեջ ի մի են բերված Արմեն Տորյանի գործերը:

1911-1914 թթ. Կ. Պոլսում հայերեն լույս տեսնող «Շանթ» կիսամյա հանդեսն էջեր էր տրամադրում ՀԵՐՄԻՆԵ ՀՈՎՅԱՆԻ ֆրանսերեն բանաստեղծություններին, երբեմն նաև՝ դրանք ներկայացնում զուգադիր հայերեն թարգմանությամբ:

Ֆրանսերեն էր գրում նաև ԻՍԿՈՒՀԻ ՄԻՆԱՍԸ: Ուսանել է ծննդավայրի օրիորդաց վարժարանում: Ստեղծագործել է հիմնականում ֆրանսերեն, նաև իտալերեն: Բանաստեղծությունների և նորավեպերի զգալի մասը տպագրել է ամուսնու՝ թարգմանիչ Ժան Մինասյանի 1908-1911 թթ. Կոստանդնուպոլսում ֆրանսերեն հրատարակած «La patrie» («Հայրենիք») թերթում: Կապված է եղել հայ մտավոր կյանքի հետ: Լույս է ընծայել «Վենետիկյան մարգարիտներ», «Հեծեծյուններ», «Ներուժ ժամեր», «Այն, ինչ մեռնում է», «Աթենքյան վարդեր», «Իտալիայի լուսաստվերը», «Ձայն գիշերվա մեջ», «Ապրել» և այլ ժողովածուներ: Նրան հայերեն են թարգմանել Դանիել Վարուժանը, Արման Կոթիկյանը:

1925 թ. Փարիզում Կոստան Զարյանը հիմնում և խմբագրում է արվեստի, գրականության և փիլիսոփայության «Բաբելոնի աշտարակ» ֆրանսերեն ամսագիրը:

1940-1950-ական թթ. ֆրանսերենի է անցնում հայազգի խոշորագույն գրող ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԸ: 1930-ական թթ. վերջերից, շուրջ քսան տարի գամված լինելով անկողնուն, նա օրերն անցկացնում է հիվանդանոցներում ու առողջարաններում: Այդ տարիներին նա գրում է ֆրանսերեն բանաստեղծություններ ու պատմվածքներ և Արմեն Լյուրեն ստորագրությամբ հրատարակում «Ամբողջ Թրաֆալգարը» (1939), «Ոչինչի որոնում» (1942), «Ծպտյալ ճամփորդը» (1946), «Սուրբ համբերություն» (1951), «Գիշերային տեղափոխություն» (1955), «Բարձրադիր դարավանդներ» (1957), «Հուր ընդ հրո» (1964) ժողովածուները, որոնք արժանանում են ոչ միայն ֆրանսիական գրաքննադատության ուշադրությանը, այլև՝ մեծ համբավ վայելող մրցանակների: Այս հաջողություններից հետո կյանքի վերջում նա վերստին անցնում է հայերենի և մայրենի լեզվով հրատարակում մի քանի գիրք:

Ֆրանսագիր գրողների մեջ համբավի հասավ ՎԻԿՏՈՐ ԳԱՐԴՈՆԸ (Վահրամ Կաքավյան, 1903-1973): Վանեցի էր: Հայտնի է, որ Գարդոնի հայրը «Արմենական» կուսակցության համահիմնադիրն էր, իսկ իր տունը դարձել էր ժողովարան: Ապագա գրողը մասնակցել է բոլոր ժողովներին:

Ծննդավայրը կորցնելուց հետո մատնվեց օտարության: Իր կենսապատումի մեջ՝ գաղթի ճանապարհներին փախեփախի հոգեբանական կտտանքներին տրված, նրան հիշել ու կերպավորել է Գուրգեն Մահարին: 1915 թ. բռնագաղթին հաջորդող շրջանն է: Գաղթականները մի կերպ հասել են Թիֆլիս, հիմա էլ ճանապարհ են բռնել դեպի

Վլադիկավկազ: Երկուսն էլ 13-14 տարեկան պատանիներ են արկածներով լեցուն նոր իրականության մեջ (Գ. Մահարի, «Երկերի ժողովածու», հ, 2, 1967, գլ. 9-21, էջ 258-301):

Կաթավյան-Գարդոնը սովորել է նախ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, այնուհետև՝ Կոստանդնուպոլսի Կեդրոնական վարժարանում և ապա՝ Սորբոնի համալսարանում: Աշխատել է Կոստանդնուպոլսի Կեդրոնական վարժարանի ուսուցիչ:

Տեսավ 1915 թ. ողբերգությունը, նաև հերոսական ինքնապաշտպանությունը: Հեռացավ Թիֆլիս, ուր և մտավ Ներսիսյան դպրոց: 1917 թ. Դոնի Ռոստով, իսկ 1920թ.՝ Կոստանդնուպոլիս ճանապարհով 1923 թ. հասավ և հաստատվեց Ֆրանսիայում: Ամուսնացել է ֆրանսերենի ուսուցչուհի Էլենի հետ և ունեցել երկու երեխա:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբում գերեվարվել է, փախել ու միացել է ֆրանսիական պարտիզանական խմբերին, այսինքն՝ Դիմադրական շարժմանը և ընդունել «Վիկտոր Գարդոն» ծածկանունը: 1947 թ. արժանացել է ֆրանսիական Պատվավոր Լեգեոնի շքանշանի: Կապված էր Փարիզի հայ գրական միջավայրի հետ, «Վասպուրական» հայրենակցական միության անդամ էր: Հիմնել է «Հայկական ծագումով ֆրանսիացիների ֆեդերացիա»: Հայերեն և ֆրանսերեն փիլիսոփայական հոդվածներով հանդես է եկել մամուլում, մասնակցել գիտաժողովների:

Հայտնի է ինքնակենսագրական «Զմրուխտավառ ասպետը» վեպով: 20-րդ դարասկզբի Վանն ու վանեցիների աշխարհը: Նույն մոտիվներով նրա գրչին են պատկանում նաև «Կյանքի կանաչ արևը» և «Բոսորավառ հայտնություն» գրքերը (երեքն էլ հայերեն թարգմանությամբ լույս են տեսել 1990 թ.):

Հեղինակ է նաև այլ գրքերի, որոնցից առանձնացնենք «Վարդանանք» (1963), «L'apocalypse é'carbates» (1970), «Le Venetsi un enfanse armenienne» (2008):

Տարիների ընթացքում հանդես են գալիս ֆրանսագիր այլ գրողներ, ովքեր սերտորեն կապված էին ազգային ավանդույթներին և խոսում էին հայերեն: Արթուր Ադամովը, Անրի Թրուայան, Շարլ Ագնավուրը, Ռուբեն Մելիքը, Վահե Քաչան, Անրի Վերնոյը (Աշոտ Մալաքյան):

ԱՐԹՈՒՐ ԱԴԱՄՈՎԸ (Հարություն Ադամյան, 1908-1970) ծնվել է Կիսլովոդսկում: Նրա հայրը շուշեցի նավթարդյունաբերող էր: Առաջին աշխարհամարտից առաջ Ադամյանների ընտանիքը մեկնում է Եվրոպական շրջագայության: Պատերազմը փոխում է նրանց կյանքի ուղին: Ապագա գրողը կրթությունն ստանում է Շվեյցարիայում, Գերմանիայում և Ֆրանսիայում, իսկ 1924 թ.-ից վերջնական բնակություն հաստատում Փարիզում:

Արթուր Ադամովը գրականություն է մուտք գործել գերիրապաշտական բանաստեղծություններով, այնուհետև անցել արձակի: 1946 թ. լույս է տեսել «Խոստովանություն» ինքնակենսագրական վիպակը:

Ադամով անունը հիմնականում կապվում է XX դարի մշակութային ուղղություններից մեկի՝ *աբսուրդի թատրոնի* հետ: Այդ ուղղության գեղագիտական հիմքը գոյապաշտական փիլիսոփայությունն էր:

Աբսուրդի թատրոնն իրականությունը ներկայացնում էր որպես ներքին իմաստից ու պատճառական կապերից զուրկ մի անհեթեթ վիճակ: Կյանքի արժեքները հանգում էին

ոչինչի ու մահվան: Դա ուղղված էր հոգեբանական թատրոնի դասական դարձած ավանդույթների դեմ՝ այդ իսկ պատճառով աբսուրդի թատրոնը կոչվում է նաև *հակադրամա*: Փոխվեց նաև թատերական երկի՝ կյանքը նմանակող կառուցվածքը: Դեպքերի հաջորդական ընթացքին, գործողության զարգացմանն ու հանգուցալուծմանը փոխարինեց զգացմունքային ցնցման պայմաններում կյանքին ուղղված հայացքը:

Համաշխարհային հռչակի հասած թատերագիրներ Սամուել Բեքեթի և Էժեն Իոնեսկոյի հետ մեկտեղ Արթուր Ադամովը 1940-ականների կեսերից դառնում է աբսուրդի թատրոնի պարագլուխներից մեկը: Հետաքրքրական է, որ, չնայած աբսուրդի թատրոնի հիմնադիրներն ապրում և գործում էին Ֆրանսիայում, բայց նրանցից ոչ մեկը ծագումով ֆրանսիացի չէր. Բեքեթն իռլանդացի էր, Իոնեսկոն՝ ռումինացի, Ադամովը՝ հայ: Աբսուրդի թատրոնի գաղափարախոսությունը ինչ-որ չափով նրանց վիճակված թափառական կյանքի, օտար արժեքների մեջ իրենց վերագտնելու արդյունքն էր: Եթե կյանքը անտրամաբանական է վարվել իրենց հետ, ինչո՞ւ պիտի իրենք տրամաբանությունը դարձնեն արվեստի օրենք: Բնորոշ օրինակներ են Բեքեթի «Գոդոյին սպասելիս» (1952), Իոնեսկոյի «Ռնգեղջյուր» (1959) թատերգությունները:

Ադամովի թատերգությունների մեծ մասը բեմադրվել է 1950-ական թվականներին՝ «Ծաղրանմանություն» (1950), «Ներխուժում» (1950), «Մեծ և փոքր զորախաղեր» (1953), «Պրոֆեսոր Տարան» (1953): Նրան հատկապես մեծ հռչակ բերեց «Պինգ-պոնգ» (1955) թատերգությունը: Խորհրդանշական ձևերի մեջ հեղինակը ներկայացնում է մեքենայի վերածված իրականության և կործանվող մարդկության պատկերը: Մեքենան ինքնին գործող անձ է, իսկ մարդիկ վերածվել են խաղաքարերի և դատապարտված են մարմնական կամ հոգեկան մահվան:

1950-ական թթ. կեսերից Ադամովը հեռացավ աբսուրդի թատրոնից և հանդես եկավ պատմաքաղաքական բնույթի նոր թատերգություններով՝ «Պառլո Պառլի» (1957), «Յոթանասունմեկի գարունը» (1961), «Մնացուկների քաղաքականությունը» (1962), «Սրբազան Եվրոպա» (1966): Նշանակալի է Ադամովի դերը XX դարի գեղարվեստական մտածողության նորոգման գործում:

ԱՆՐԻ ԹՐՈՒԱՅԱՆ (Լև Տարասով-Թորոսյան, 1911-2007) ծնվել է Մոսկվայում: Նրանց ընտանիքը վաղուց հեռացել էր հայկական միջավայրից և ընդունել ռուսական կողմնորոշում: Խոսքը վերաբերում է լեզվին ու մշակույթին, որի արտահայտություն է նաև գրականությունը: 1918թ. ընտանիքի հետ արտագաղթել է Ռուսաստանից և 1920թ. հաստատվել Ֆրանսիայում: Ստացել է իրավաբանական կրթություն: Առաջին իսկ վիպակը՝ «Սարդը» (1938), մեծ հռչակ բերեց նրան, արժանացավ հանրահայտ Գոնկուր մրցանակի: Թե՛ այս, թե՛ «Քանի աշխարհը կա» (1947) երկերում նա պատկերել է XX դարի սկզբի Ռուսաստանի պատմաքաղաքական իրավիճակը և վտարանդիների կացությունը: Վերջինի հիմքում նաև իր տոհմի պատմությունն է: «Արդարների լույսը» (1959-1963) պատմավեպերի շարքը նվիրված է դեկաբրիստներին, «Ապագայի ժառանգությունը» (1968-1970) եռագրությունը՝ ճորտատիրության վերացմանն ու նարոդնիկական շարժմանը:

Թրուայային ավելի մեծ հոչակ բերեցին «Սգավոր ձյունը» (1952, հայերեն՝ 1973) վիպակը և «Էզլեթիերների ընտանիքը» (1965-1967, հայերեն՝ 1980) եռագրությունը, որոնցից առաջինը ևս արժանացել է գրական հեղինակավոր մրցանակի:

Հայկական կյանքին է նվիրված նրա «Հայկական պատարագը» (1938): Ինքնակենսագրական բնույթ ունի «Իմ այնքան երկար ճանապարհը» (1976) հարցազրույցների հավաքածուն: Առանձին վեպեր հայերեն թարգմանվել և տպագրվել են «Մարմարա», «Արև» թերթերի էջերում: 1959 թ. Թրուայան ընտրվել է Ֆրանսիական ակադեմիայի անդամ, որի քառասուն անմահներից մեկը լինելու պատվին արժանացած առաջին օտարազիր գրողն է:

ՎԱՀԵ ՔԱՉԱՆ (Խաչատրյան, 1928-2003) ծնվել է Սիրիայի Դամասկոս քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է Բեյրութում: 1945 թ. մեկնել է Փարիզ և հմտացել կինոբեմադրիչի մասնագիտության մեջ: Եղել է «Սուար դը Բեյրութ» («Երեկոյան Բեյրութ») թերթի թղթակիցը: Հաստատվելով Փարիզում՝ Քաչան սկսում է գրական գործունեությունը: Առաջին վեպը՝ «Կիրակի օրվանից մնացած ծխուկներ», տպագրվում է 1953 թ.: Նրան հատկապես մեծ հոչակ է բերում «Ակն ընդ ական» (1955) վեպը, որը հրատարակվել է նաև հայերեն: Այդ վեպը 1957 թ. արժանացել է ֆրանսիական գրական մրցանակի: Հայերեն են թարգմանվել նաև «Կարթ» (1957), «Արարչի ութերորդ օրը» (1960), «Գիշատիչների խնջույքը» (1960), «Գավազան» (1963), «Մի մարդ ընկավ փողոցում» (1975) վեպերն ու վիպակները: Հայկական կյանքին է առնչվում «Մի դաշույն այս պարտեզի մեջ» (1981) վեպը, որը ներկայացնում է Արևմտյան Հայաստանի կացությունը՝ ընդգրկելով 1890-ական-1915 թվականները: Քաչայի շատ ստեղծագործությունների հիման վրա ստեղծվել են շարժանկարներ:

ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔԸ (Մելիք Մինասյան, 1920-2007) ծնվել է Իրանի Թավրիզ քաղաքում: Մանկուց ծնողների հետ բնակություն է հաստատել Ֆրանսիայում, որտեղ էլ ստացել է միջնակարգ, ապա՝ Սորբոնի համալսարանում բարձրագույն կրթություն: Աշխատել է լուսավորության բնագավառում, ձայնասփյուռում, հրատարակչություններում: Նրա ստեղծագործությունը հետպատերազմյան տարիների ֆրանսիական պոեզիայի հիշարժան երևույթներից է: Ընդ որում, ի տարբերություն արդիապաշտության միտված սերնդակիցներից շատերի, նա հաջողության հասավ դասական ավանդույթների պահպանումով ու զարգացումով: Առաջին ժողովածուն՝ «Աշխարհի համերաշխությունը», լույս է տեսել 1946 թ.: Այնուհետև հրատարակել է բազմաթիվ գրքեր: Նրան լայն ճանաչում բերեցին հատկապես «Քարե պահակը» և «Ստորգետնյա եղանակներ» գրքերը, որոնք լույս տեսան 1961 և 1962 թթ.: Իր վաստակի համար նա արժանացել է Ֆրանսիայի ակադեմիայի և Ֆրանսիայի գրողների միության մրցանակների:

Ռուբեն Մելիքի ստեղծագործության մեջ մշտական տեղ ունի Հայաստանը, որտեղ նա եղել է մի քանի անգամ, իսկ 1986 թ. մասնակցել է Հայաստանի գրողների 9-րդ համագումարի աշխատանքներին:

«Քարե պահակը» պոեմն ասես Հայաստանի «Գիրք ծննդոց»-ը լինի: Իր ժողովրդի պատմության հետ սկսած զրույցը նա շարունակում է նաև «Հայկական առասպել», «Տոնահանդես» բանաստեղծություններում: Հայոց թափառական կյանքի առասպելն այսօր իր թշվառությունն է թաղում, իսկ նրա առասպելը՝ առասպելն է համայն մարդկության:

Ռուբեն Մելիքը նաև հայ գրականության լավագույն բարեկամներից է, Փարիզի ձայնասփյուռով և հեռուստատեսությամբ նա կազմակերպել է հայ գրականությանը նվիրված հաղորդումներ, հանդես եկել բանախոսություններով: Նրա խմբագրությամբ և կազմակերպական ջանքերով 1975 թ. Փարիզում լույս է տեսել «Հայ պոեզիայի հավաքածու: Հինգերորդ դարից մինչև մեր օրերը» ծավալուն գիրքը:

1978 թ. Երևանում թարգմանաբար լույս տեսավ Մելիքի «Մարմին՝ ինձնով կենդանի» ժողովածուն, որի «Խոսք հայ ընթերցողին» նախաբանում նա գրել է. *«Ահա իմ պոեզիան այս գրքի շնորհիվ միավորվում է իր բնաշխարհին, հայկական աշխարհին: Բրականանում է երիտասարդական մեծ իդալերիցս մեկը՝ վերադառնալ հայրենի տուն, վաղ թե ուշ, այս կամ այն ձևով վերադառնալ և իր տեղն ունենալ հարազատ օջախում: Լինել ձեր մեջ, Հայաստանի քույրեր և եղբայրներ... Ես ձերն եմ՝ մեր ցավերն ու հրճվանքը լսելիս, մեր հիշատակների ու հույսերի մասին վերապատմելիս, մեր հուշերի միասնականության մեջ, քանզի ես ձերն եմ հանուն անցյալում հոշոտված, վիրավոր ու սգակիր մեր հայրենիքի և հանուն փրկված, ազատագրված ու բարգավաճող այսօրվա հայրենիքի»* [Մելիք, 1978, 4]:

Հայ մշակույթին բերած ծառայությունների համար Ռուբեն Մելիքը 1986 թ. արժանացել է Հայաստանի գրողների միության Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակի:

ՇԱՐԼ ԱԶՆԱՎՈՒՐԸ (Շահնուր-Վաղինակ Միքայելի Ազնավուրյան) ծնվել է 1924 թ. մայիսի 22թ. Փարիզում: Ծնողները մանկուց նրան ծանոթացրել են հայ տաղերգուների, այդ թվում՝ Սայաթ-Նովայի ստեղծագործություններին: Համաշխարհային համբավի հասած երգահանը, երգիչն ու դերասանը նաև բանաստեղծ է: Նրա քերթվածները ֆրանսիական շանսոնների տեսակին պատկանող փոքրիկ բալլադներ են, որոնք «XX դարի պոեզիա» հեղինակավոր մատենաշարով լույս են տեսել Փարիզում:

Հայերեն թարգմանվել են Ազնավուրի գրեթե բոլոր գործերը: 1968 թ. տպագրվել «Մեր սրտի չափով» բանաստեղծությունների ժողովածուն, իսկ 1976 թ.՝ «Ազնավուրը Ազնավուրի մասին» ինքնակենսագրական պատումը, որի մեջ խոսում է իր հայկական ծագման, ծնողների և կյանքում տեղը գտնելու դժվարին, բայց երջանիկ ճակատագրի մասին:

Ահա թե ինչպես է նկարագրում նա իրենց ընտանիքը. *«Մենք մի գաղթական հայ ընտանիք էինք ու, ինչպես բոլոր գաղթական հայ ընտանիքները, կապված էինք մեր լեզվին, սովորություններին ու եկեղեցուն: Զուսպ, քաշված, համեստ էր մեր ընտանիքը: Մենք սիրում էինք ծիծաղել, երգել, պարել և արտասվել: Այո՛, և արտասվում էինք, որովհետև հայը շատ զգացմունքային է ու հեշտությամբ է լաց լինում և՛ կնունքին, և՛ պսակին, և՛ թաղմանը»* [Ազնավուր, 1976, 10]:

Ազնավուրը սերտորեն կապված է Հայաստանին: 1964 թ. նա համերգներ է տվել Երևանում: 1988 թ. երկրաշարժից հետո ստեղծել է «Ազնավուրը Հայաստանին» հիմնադրամը, բազմիցս այցելել Հայաստան, Ժորժ Կառվարենցի հետ հորինել «Հայաստանին» հուզիչ երգը:

Ֆրանսագիր մյուս հայ գրողներից հիշատակենք նաև Ժան-Ժակ Վարուժանին, Վինյի ժորժին (Զոհրապ Պաղճյան), Ալեք Վարուժին, Վահե Գոդելին (բնակվում է Շվեյցարիայում, հայ է մոր կողմից), նկարիչ Ժան Գառզուի որդու՝ Ժան-Մարի Գառզուին: Կան նաև այլ անուններ:

SUMMARY

Due to the historical and political upheavals at the beginning of the 20th century—the 1915 Armenian Genocide, continuous wars, the Russian Revolution of 1917, and the fall of the First Republic of Armenia—the Armenian people were forced to leave their historical homeland and seek refuge in various countries.

Some creative individuals began writing in the official languages of their new host countries.

This is how Armenian writers in English, French, Russian, Spanish, Romanian, Bulgarian, Arabic, and Turkish emerged. For this reason, literary studies use the term “Armenian writers in foreign languages,” rather than “foreign-language Armenian literature,” since the phenomenon refers to authorship, not to the formation of a separate literary tradition.

A number of these foreign-language Armenian writers achieved worldwide fame and became prominent literary figures. One significant branch among them is the group of Armenian writers who created in French. Their voices were first heard in France in the early 20th century and have continued to resonate to this day. Among the most notable are Victor Gardon (Vahram Kakavyan), Arthur Adamov, Henri Troyat, Vahe Katcha, Rouben Melik, and Charles Aznavour.

In 1925, Gostan Zarian founded in Paris the art, culture, and philosophy journal “La Tour de Babel” (“The Tower of Babel”).

Armenian writer Shahan Shahnour, at a certain stage in his life, abandoned writing in Armenian and, under the name Armen Lubin, switched to French. He and the other mentioned writers received prestigious awards and distinctions and contributed to the overall development of literature created in the French language. Today, this tradition is continued by a younger generation of Armenian writers living in France, such as Jean-Jacques Varoujean, Vigny Georges (Zohrab Baghdjian), Alec Varoujian, and others. The legacy of Armenian writers in French is translated, published, and appreciated also in Armenia.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ազնավուրը Ազնավուրի մասին, Երևան, «Հայաստան», 1976, 256 էջ:
2. Հանդիպումներ Ուիլերմ Սարոյեանի հետ / Խմբագիր՝ Պ. Սնապեան, Պէյրուք, տպ. Համազգայինի Վահէ Սէթեան, 1978, 288 էջ:
3. Մելիք Ռ., «Մարմին՝ ինձնով կենդանի», Երևան, Սովետական գրող, 1978, 160 էջ:
4. Զարյան Կ., Երկեր / Խմբ.՝ Պ. Սնապեան, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1975, 643 էջ:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական
մանկավարժական համալսարանի պատմության թանգարան

ԳՐՔԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Բանալի բառեր՝ գրքի թանգարան, մշակութային ժառանգություն, կրթություն, թանգարանային մանկավարժություն, ժամանակակից տեխնոլոգիական և մշակութային մարտահրավերներ:

Keywords: book museum, cultural heritage, education, museum pedagogy, modern technological and cultural challenges.

Գրքի թանգարանները յուրահատուկ մշակութային և կրթական հաստատություններ են, որոնք միավորում են պատմությունը, արվեստը, գրականությունը և տեխնոլոգիաները: Դրանք ոչ միայն ներկայացնում են գրքի պատմությունն ու տպագրական արվեստը, այլև ձևավորում են անձի արժեքային, գեղագիտական և ինտելեկտուալ աշխարհայացքը: Թանգարանի դերը կրթության և դաստիարակության համակարգում հիմնված է «կենդանի ուսուցման» սկզբունքի վրա, երբ այցելուի ճանաչողական փորձը ձևավորվում է անմիջական շփման միջոցով նյութական մշակույթի և պատմական փաստերի հետ:

Դարեր շարունակ անցյալի փորձը սերունդներին փոխանցելու, դրա հիման վրա կրթելու և դաստիարակելու լավագույն միջոց է հանդիսացել գիրքը: Դա է պատճառը, որ մեր ժողովուրդը սրբացրել է գիրքը՝ համարելով այն նաև ազգային ինքնապահպանության միջոց: Սակայն եթե մարդու տքնաջան ու երկարատև աշխատանքի արդյունքում ստեղծված ձեռագիր մատյանները, որոնց մեծ զանգվածը հանգրվանել է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում, մատչելի չէին բոլորին, ապա հայերեն առաջին տպագիր գիրքը սկիզբ դրեց ժողովրդին կրթելու և դաստիարակելու մի աննախադեպ հնարավորության՝ հանդիսանալով մեր ժողովրդի զարգացմանն աջակցող հզոր միջոց: Հետագայում մենք ականատես եղանք մեր երկրի բոլոր քաղաքներում և գյուղերում բազմիցս ընթերցված և ուսումնասիրված գրքերով լեցուն գրադարանների: Գիրքը դարձավ քաղաքական պայքարի զենք, տեղեկատվության հիմնական միջոց: Տպագիր գիրքը զբաղեցրեց մարդու կյանքում ամենակարևոր տեղերից մեկը: Ընթերցանությունը ճիշտ կազմակերպելու և դրանով իսկ աճող սերնդի կրթական մակարդակն ապահովելու նպատակով ժամանակին մշակվել են հատուկ մեթոդներ, երբ հաշվի էին առնվում տարիքային առանձնահատկությունները, տարվում էր շերտավորված սպասարկում, կազմվում էին հետաքրքիր ու տպավորիչ քարտարաններ, որոնք հնարավորություն էին ընձեռում նույնիսկ կրտսեր տարիքի ընթերցողին կողմնորոշվելու գրքեր ընտրելիս, իսկ դժվարանալու դեպքում օգնության էր գալիս

նրանց սպասարկող գրադարանավարուհին Սկրտչյան, 1979, 91-99]: Ընթերցանությունն ակտիվացնելու համար անհատական գրույցի միջոցով նա իրագել էր դառնում երեխաների նախասիրություններին ու հետաքրքրություններին, օգնում էր գրքերն ընտրելիս, համապատասխան գրականություն էր առաջարկում նրանց: Նման գրույցներ անցկացվում էին գրադարան այցելող յուրաքանչյուր ընթերցողի հետ, և ընթերցողական քարտում ընթերցողի հետաքրքրությունների ու հակումների մասին արվում էին համապատասխան նշումներ [Պետիկյան, 1988, 81-82]:

Մարդկությանը մի քանի դար պահանջվեց «ընթերցանության մշակույթ» հասկացությունը ձևակերպելու համար: Յու. Պ. Միլենտևայի խոսքերով՝ այս հասկացությունը, որը ի հայտ եկավ 18-րդ դարում, 20-րդ դարի վերջին սկսեց ներառել գրքերի ընտրություն, գրքի կապը ընթերցանության նպատակի հետ, կարդացածը հասկանալու և համախմբելու ունակությունը, ընթերցանության սերն ու սովորությունը, ընթերցանության տեխնիկան և մեթոդները, ընթերցանության ինքնակրթական գործառնությունը, ընթերցանության հիգիենան և նշումներ կատարելը [Мелентьева, 2010, 168-171]:

Գրքային ժառանգությունը՝ որպես մարդկության մշակութային հիշողության կարևոր մաս պահպանելու, ուսումնասիրելու, հանրահռչակելու և այն ապագա սերունդներին փոխանցելու նպատակով ժամանակի ընթացքում ստեղծվեցին գրքի թանգարաններ: Գրքի թանգարանները ձևավորվեցին նաև որպես պատասխան գիտական և գեղարվեստական արժեք ունեցող գրավոր մշակույթի եզակի հուշարձանների կորստի վտանգին, որն առաջացել էր ժամանակի, պատերազմների և հին գրքերի նկատմամբ օգտապաշտ վերաբերմունքի հետևանքով: Դրանք դարձան այն կենտրոնները, որտեղ ոչ միայն պահպանվում են գրքերը, այլև ուսումնասիրվում է գրելության, տպագրության, նկարագարդման և կազմարարական արվեստի զարգացումը, ինչպես նաև ձևավորվում է հասարակության հետաքրքրությունը ընթերցանության և լուսավորության նկատմամբ:

1986 թվականին հայտնի թանգարանագետ Ե. Վանսլովան հրապարակել է գրքի թանգարանին և թանգարանային մանկավարժությանը նվիրված հոդված, որում արտացոլում է թանգարանագիտության և մանկավարժության զարգացումը ԽՍՀՄ-ում այնժամանակահատվածում, երբ ակտիվորեն ուսումնասիրվում էին թանգարանների, կրթական հաստատությունների և այցելուների միջև փոխգործակցության մեթոդները: Հոդվածի համատեքստում, գրքի թանգարանը ծառայում է որպես կարևոր մանկավարժական սկզբունքների կիրառման վայր: Դրանցից են՝ ծանոթացում մշակույթին (ներառյալ ժողովրդական և ազգային մշակույթը), ստեղծագործականությունը զարգացնելը, հայրենասիրությունն ու հոգևոր արժեքները խթանելը: Գրքի թանգարանի գործունեությունը նպաստում է գրքերի և գրերի հետ կապված մշակութային ժառանգության պահպանմանը և փոխանցմանը, ինչպես նաև ծառայում է որպես կրթության և դաստիարակության գործիք [Ванслова, 1986, 32-39]:

Առաջին գրքի թանգարանները Եվրոպայում հայտնվել են 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, երբ հետազոտողներն ու գրքասերները սկսեցին հավաքել հազվագյուտ

հրատարակություններ, ձեռագրեր, վաղ տպագիր գրքեր, տպագրական գործիքներ և փորագրություններ: Նրանց նպատակն էր ցույց տալ գրքի զարգացումը՝ ձեռագիր օրինակներից մինչև զանգվածային արտադրության տպագիր հրատարակություններ: Այս հավաքածուները դարձան գրի, տպագրության, նկարագարման և կազմարարության զարգացումը ներկայացնող թանգարանային ցուցահանդեսների հիմքը: Այսօր գրքի թանգարաններ գործում են բազմաթիվ երկրներում: Առավել հայտնիներն են Մայնցում (Գերմանիա) գտնվող Գուտենբերգի թանգարանը, որը նվիրված է տպագրության գյուտարարին [Gutenberg Museum], Վենետիկի Ս. Ղազարի Միֆթարյանների ձեռագրատունը, Լոնդոնում գտնվող Բրիտանական գրադարանը, Ուկրաինայի Գրքերի և տպագրության թանգարանը և Ֆրանսիայի ազգային գրադարանը, որը պարբերաբար անցկացնում է հազվագյուտ հրատարակությունների և ձեռագրերի ցուցահանդեսներ: Ռուսաստանում կա ավելի քան 10 խոշոր գրքի թանգարան: Դրանցից ամենահայտնիներն են՝ Ռուսաստանի պետական գրադարանի գրքի թանգարանը (Մոսկվա), Ռուսաստանի ազգային գրադարանի գրքի թանգարանը (Սանկտ Պետերբուրգ), Ռուսաստանի պետական մանկական գրադարանի գրքի պատմության թանգարանը (Մոսկվա), Ռուսաստանի գրքի և տպագրության թանգարանը (Մոսկվա), Գուտենբերգի անվան հազվագյուտ գրքերի թանգարանը (Նովոսիբիրսկ), Վոլոգդայի գրքի և գրաֆիկայի թանգարանը և Հին գրքերի և փորագրությունների թանգարանը (Կազան):

Հայաստանում գրքի պաշտամունքի ավանդույթը սկիզբ է առնում միջնադարյան գրչատներից՝ ձեռագրերի ընդօրինակման և զարդարման կենտրոններից: Հետևաբար, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ստեղծումը այս ազգային մշակութային ավանդույթի տրամաբանական շարունակությունն էր: Այսօր Մատենադարանը ոչ միայն թանգարան է, այլև ձեռագրական ժառանգության պահպանման աշխարհի ամենամեծ հետազոտական կենտրոններից մեկը՝ ավելի քան 23,000 ձեռագրերով հայերեն և այլ լեզուներով [Մատենադարան]:

Թվայնացման դարաշրջանում գրավոր մշակույթի նյութական և հոգևոր ժառանգությունը պահպանելու ցանկությամբ է պայմանավորված վերջին տարիներին շատ երկրներում գրքի թանգարանների և տպագրության պատմության նկատմամբ վերսկսված հետաքրքրությունը: Տարբեր երկրներում վերջերս բացվել կամ վերանորոգվել են գրքի թանգարաններ: Օրինակ, 2017 թվականին Թբիլիսիում Վրաստանի Իլյա Ճավճավաձեի ազգային գրադարանի առաջին շենքում բացվեց գրքի թանգարան [Музей книги (Тбилиси)]:

2017 թվականին Հայաստանի ազգային գրադարանում (Երևան) բացվեց Գրատպության թանգարանը: Ցուցադրությունը ներառում է հայ գրքի պատմությունը՝ 15-րդ դարի ինկունաբուլաներից մինչև ժամանակակից հրատարակություններ: Մի բաժին նվիրված է Վենետիկի, Ամստերդամի և Կոստանդնուպոլսի առաջին հայկական տպարաններին: Թանգարանում լայնորեն կիրառվում են այցելուների հետ աշխատելու ժամանակակից ձևեր՝ ինտերակտիվ էկրաններ, հազվագյուտ գրքերի թվային տվյալների

բազա, դպրոցականների համար կրթական ծրագրեր [Հայաստանի ազգային գրադարան]:

Ռուսաստանում 2021թվականին Ռուսաստանի պետական գրադարանի Գրքի պատմության թանգարանում ցուցադրությունը վերակազմակերպվեց և թարմացվեց «Գիրքը մշակութային տարածքում» ցուցահանդեսով, որը միավորում է 15-ից 21-րդ դարերի հազվագյուտ հրատարակություններ: Գերմանիայի ազգային գրադարանի կազմում 1884 թվականից գործող Լայպցիգի Գերմանական գրքերի և գրականության թանգարանում 2020 թվականին բացվել է նոր շենք և մուլտիմեդիա ցուցահանդես «Գրի ուղին. կավե տախտակներից մինչև թվային գրքեր» թեմայով: Հիմա այստեղ կան լրացված իրականության (AR) սենյակներ, որտեղ այցելուները կարող են տեսնել, թե ինչպես է ստեղծվել ձեռագիր գիրքը: Պեկինում Չինաստանի ազգային գրքի թանգարանը բացվեց 2019 թվականին և ներառում է հին չինական ձեռագրերի, գեղագրության և հազվագյուտ տպագրական հատվածների հավաքածու: Մշակվել են հին գրային համակարգերի և տպագրության վերաբերյալ կրթական ծրագրեր [National Museum of Classic Books]: Նոր շեշտադրում է կատարվում Եվրոպայում հումանիզմի և տեսողական մշակույթի զարգացման գործում գրքերի դերի վրա: Գրքերի և տպագրության թանգարանը Լիոնում թարմացրել է իր մշտական ցուցադրությունը 2021 թվականին, իսկ 2025 թվականի հունիսից վերանորոգման աշխատանքներ են սկսվել՝ նշանավորելով մեծ վերափոխման սկիզբը, որպեսզի 2027 թվականին թանգարանը բացվի նոր ինքնությամբ, թարմացված, ավելի մատչելի և ավելի ինտերակտիվ փորձով [Musée de l'imprimerie et de la communication graphique]:

Երեխաներին գրքի աշխարհը բացահայտելու, գրքի հետ կապելու նպատակով Եկատերինբուրգում 1994 թվականին բացվեց թանգարան, որը բաղկացած էր տիկնիկների և մանկական գրքերի հավաքածուներից: Տիկնիկները սովորական խաղալիքներ չեն, այլ մարմնավորում են տարբեր գրական հերոսների: Թանգարանում կազմակերպվում են տոներ և հանդեսներ երեխաների մասնակցությամբ, մրցույթներ և տիկնիկային ներկայացումներ: Բնականաբար, այս ամենը նպաստում է երեխաների մոտ գրքի հանդեպ հետաքրքրություն առաջացնելուն, գիրքը կյանքի ընկեր դարձնելուն [Музей кукол и детской книги «Страна чудес»]:

Այս ամենը վկայում է, որ գրքերը մնում են կենդանի մշակութային միջոցներ, իսկ գրքի թանգարանները տարածքներ են, որտեղ գրագետ քաղաքակրթությունների անցյալը, ներկան և ապագան միաձուլվում են մեկ մշակութային դաշտում:

Գրքի թանգարանները ավելին են, քան պարզապես հին հատորների պահոց: Սա դարաշրջանների միջև երկխոսության տարածք է, որտեղ ձեռագիրը հանդիպում է ժամանակակից տեխնոլոգիաներին: Ժամանակը ի հայտ բերեց հաղորդակցության նոր միջոցներ և մատաղ սերնդին գրքի զարմանահրաշ աշխարհը ներկայացնելու համար անհրաժեշտ եղան արդեն հատուկ ձևեր և մեթոդներ:

21-րդ դարի թանգարանային կրթությունը նոր բովանդակություն է ստանում թվայնացման, մուլտիմեդիա տեխնոլոգիաների և ինտերակտիվ հարթակների միջոցով, անցնում է թվային և ինտերակտիվ նորարարությունների՝ ստեղծելով կրթական

հարթակներ, որտեղ միահյուսվում են դասական և նոր մեդիա միջոցները: Թվային ցուցադրությունները, վիրտուալ այցելությունները և ինտերակտիվ դասերը (օր.՝ QR-կոդերով տեղեկատվություն, 3D ձեռագրեր) գրքի թանգարանները դարձնում են ժամանակակից կրթական տարածքներ, հնարավորություն են տալիս երիտասարդությանը ներգրավվել գիտելիքի և մշակույթի հաղորդակցման գործընթացում՝ դարձնելով գիրքը ոչ թե անցյալի խորհրդանիշ, այլ կենդանի կրթական ռեսուրս:

Այս ձևաչափը նպաստում է ոչ միայն գիտելիքի յուրացմանը, այլև ինքնուրույն ուսումնասիրական գործունեության և ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Ինտերակտիվ ցուցանմուշները, թվային կատալոգները և մուլտիմեդիա ինստալյացիաները նման թանգարանները դարձնում են կենսունակ և հասանելի լայն լսարանի համար: Էլեկտրոնային կատալոգները, ինտերակտիվ ցուցահանդեսները, ձեռագրերի եռաչափ մոդելները և մուլտիմեդիա կրթական նախագծերը հարուստ գրքային ժառանգությունը հասանելի են դարձնում ավելի լայն լսարանի համար և պահպանում այն ապագա սերունդների համար: Այս առումով՝ հաճախ անհանգստություն է հնչում, թե արդյոք մեզ չի սպառնում անմիջական, անձնական իրական շփման փոխարինումը վիրտուալ կյանքով, ինչն էլ հսկողությունից դուրս լինելու դեպքում հանգեցնում է հոգեբանական կախվածության՝ դարձնելով մարդուն մեքենայի կցորդ: Եւ ինչպես նշում էր Դ.Ս. Լիխաչովը, «...եթե տեխնիկայի ընձեռած հնարավորությունները չլինեն բարոյական ձեռքերում, աշխարհն, իրոք, կկործանվի» [Լիխաչով, 1989, 3]: Կարծում եմ, որ խնդրի լուծումը կախված է նրանից, թե ինչքանով կկարողանանք տեխնոլոգիաների անհսկելի զարգացումը ենթարկել հոգևոր, մշակութային խնդիրներին, որոնք կոչված են լինելու անձի և հասարակության կյանքի ինքնակազմակերպման միջոցներ:

Ժամանակակից գրքային թանգարանները կատարում են մի քանի հիմնական գործառույթներ՝

1. Մշակութային ժառանգության պահպանում՝ հազվագյուտ հրատարակությունների, ձեռագրերի, հնաձև տպագրական մեքենաների, տառատեսակների և գրքային մշակույթի այլ նյութական ապացույցների պաշտպանություն և վերականգնում:

2. Կրթական գործունեություն՝ գրի պատմության, նկարագարման, տպագրության և գրքային արվեստի վերաբերյալ շրջագայությունների, դասախոսությունների, ցուցահանդեսների և վարպետության դասերի կազմակերպում: Ինտերակտիվ և կրթական ծրագրեր, որոնք ուղղված են դպրոցականների և ուսանողների շրջանում ընթերցանության և գրքային մշակույթի նկատմամբ հետաքրքրության զարգացմանը:

3. Հետազոտություն՝ գրի պատմության, տպագրության և հրատարակչների ու գրքային նկարիչների աշխատանքի ուսումնասիրություն:

4. Ընթերցանության և կրթության խթանում՝ ցուցահանդեսների, գրքային փառատոների և գրողների, նկարիչների և տպագրիչների հետ ստեղծագործական հանդիպումների միջոցով:

Իրականացնելով նշված գործառնությունները՝ թանգարանները դառնում են նաև միջառարկայական համագործակցության և երկխոսության հարթակներ պատմության, արվեստի, մանկավարժության և տեխնոլոգիայի միջև:

Մի շարք երկրներում գրքային թանգարանները ակտիվորեն համագործակցում են գրադարանների, հրատարակչությունների և կրթական հաստատությունների հետ՝ ստեղծելով համատեղ կրթական ծրագրեր դպրոցականների և ուսանողների համար:

Գրքի թանգարաններն այսօր Հայաստանում ներկայանում են ոչ միայն որպես մշակութային հուշարձաններ, այլև որպես կրթական և դաստիարակչական կենտրոններ, որտեղ սովորողները ճանաչում են իրենց ազգային ինքնությունը գրքի միջոցով: Նրանք հանդես են գալիս որպես բաց կրթական միջավայր, որը հնարավորություն է տալիս ուսանողներին, դպրոցականներին և լայն հանրությանը՝

- ճանաչել հայ և համաշխարհային տպագրության պատմությունը, ձեռագրային մշակույթը և հրատարակչական գործը,

- հասկանալ գրքի դերը քաղաքակրթության զարգացման մեջ,

- միաժամանակ ուսումնասիրել լեզվի, գրականության և արվեստի փոխկապակցվածությունը:

Կիրառելով թանգարանային մանկավարժությունը որպես տեսական հիմք՝ թանգարանային մանկավարժները կարող են թանգարանային դասերը, ցուցադրական նյութերի դիտարկումը և թվային հարթակների միջոցով անցկացվող ծրագրերը ինտեգրել դպրոցական ուսումնական ծրագրերի մեջ՝ ապահովելով միջառարկայական կրթություն: Հիմնվելով լսարանի իմացության վրա թանգարանային մանկավարժությունը մոտենում է այնպիսի կարևոր խնդրի լուծմանը, ինչպիսին է այցելուների տարբեր խմբերի հետ աշխատանքի մեթոդիկան [Գրիգորյան, 2019, 38]:

Գրքի թանգարանը ծառայում է որպես կենդանի ուսուցման միջավայր՝

- այն հնարավորություն է տալիս սովորողներին ճանաչելու գրքի ձևավորման պատմական փուլերը՝ ձեռագրային մշակույթից մինչև ժամանակակից էլեկտրոնային հրատարակչություններ,

- նպաստում է ընթերցանության նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը, գրական ժառանգության գնահատմանը,

- միավորում է պատմությունը, գրականությունը, լեզուն և արվեստը՝ ապահովելով միջառարկայական կրթական մոտեցում:

Գրքի թանգարանը կարևոր դեր ունի նաև դաստիարակության, մշակութային ինքնության ձևավորման մեջ: Այն դաստիարակում է հարգանք դեպի գիրքը, լեզուն և մշակութային ժառանգությունը, պատասխանատվություն գիտելիքի պահպանման և փոխանցման հանդեպ, ընթերցողական և գեղագիտական ճաշակի զարգացում:

Թանգարանի ցուցադրությունները, էքսկուրսիաները, ժամանակավոր ցուցահանդեսներն ու վարպետաց դասերը կարող են ընդգրկվել դպրոցական և

համալսարանական կրթական ծրագրերում՝ ծառայելով որպես դասագրքային նյութի կենդանի լրացում: Ժամանակակից գրքի թանգարանները վերածվում են մուլտիմեդիա կենտրոնների. նրանք ստեղծում են վիրտուալ շրջագայություններ, անցկացնում են գեղագրության և տպագրության արհեստանոցներ, ակտիվորեն մասնակցում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի հիշողություն» միջազգային նախագծերին [«Աշխարհի հիշողություն»]:

Մի շարք երկրներում գրքային թանգարանները ակտիվորեն համագործակցում են գրադարանների, հրատարակչությունների և կրթական հաստատությունների հետ՝ ստեղծելով համատեղ կրթական ծրագրեր դպրոցականների և ուսանողների համար:

Հայաստանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը և Հայաստանի ազգային գրադարանի Գրատպության թանգարանը այդ առումով վառ օրինակ են ծառայում. նրանք իրականացվում են կրթական այցեր, ցուցադրություններ և ուսուցողական ծրագրեր, որոնք նպաստում են միջնակարգ և բուհական կրթության հարստացմանը: Օրինակ՝ Մատենադարանի կրթական բաժնի կողմից կազմակերպվում են թեմատիկ դասախոսություններ և վարպետաց դասեր՝ «Գրքի ճանապարհը ձեռագրից մինչև տպագիր հրատարակություն» թեմայով [Մատենադարան]:

Մատենադարանից բացի, որտեղ պահվում են հազարավոր ձեռագրեր, մանրանկարներ և փաստաթղթեր, որոնք արտացոլում են հայ ժողովրդի հոգևոր պատմությունը, հետաքրքրություն են ներկայացնում նաև Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում, Խնկո-Ապոր մանկական գրադարանում, ինչպես նաև հրատարակչություններում և մշակութային կենտրոններում կազմակերպվող մասնագիտացված ցուցահանդեսները: Այս հաստատությունները ակտիվորեն համագործակցում են դպրոցների, համալսարանների և ստեղծագործական կազմակերպությունների հետ: Հայտնի է, որ տեսողական ընկալումը հանդիսանում է մարդու կենսական կարևորագույն պայմաններից մեկը: Հոգեբանները բացահայտել են, որ տեսողության միջոցով մարդը ստանում է տեղեկատվության 90%-ից ավելին, ինչի հիման վրա էլ կառուցում է իր հարաբերությունները շրջապատող աշխարհի հետ [Столбов, 2004, 116]:

Այս առումով հետաքրքիր է Հայաստանի մի շարք գրադարանների փորձը, որոնց կից գործում են թանգարաններ՝ ցուցադրության միջոցով ուշադրությունը գրքին հրավիրելու նպատակով: Օրինակ, Հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում պարբերաբար կազմակերպվող ցուցադրությունները, անկասկած, նպաստում են գրքի պրոպագանդմանը, համալսարանի ուսանողների կողմից գրադարանից օգտվելու ակտիվացմանը:

Այսպիսով, գրքի թանգարանը կրթության և դաստիարակության առումով կարելի է դիտարկել ոչ միայն որպես անցյալի պահապան, այլև ժամանակակից կրթական և մշակութային գործընթացների ակտիվ մասնակից, լուսավորության, գիտական հետազոտությունների և մշակութային երկխոսության կենտրոն, կարևոր ուղղություն թանգարանային մանկավարժության և կրթական մշակույթի ուսումնասիրության մեջ:

Այն օգնում է հասարակությանը ճանաչել գրավոր ժառանգության արժեքը, զարգացնում է ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը և խթանում ստեղծագործական մտածողությունը, երիտասարդության հետաքրքրությունը գրքի, լեզվի և գիտելիքի նկատմամբ՝ դառնալով իսկական «հոգևոր դպրոց»։ Պահպանելով գրքերի նյութական և հոգևոր մշակույթը և տարածելով գրքային ժառանգությունը՝ թանգարանները ձևավորում են հասարակության արժեքային վերաբերմունքը ընթերցանության մշակույթի նկատմամբ, խթանում են մարդասիրական մտածողության զարգացումը և պահպանում են ազգային հիշողությունը, հարգանքը սեփական ժողովրդի և ամբողջ մարդկության գիտելիքների, պատմության և մշակույթի նկատմամբ։

SUMMARY

This article examines the role of book museums as an important institution for the preservation of cultural and spiritual heritage. The historical background of the emergence of book museums, their functions and spheres of activity are analyzed. Special attention is paid to the book museums of Armenia, in particular, the Matenadaran, as an outstanding center of manuscript and book heritage. It is shown that book museums not only preserve material written monuments, but also fulfill an educational, educational and scientific mission, adapting to modern technological and cultural challenges.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Աշխարհի հիշողություն» (անգլ. Memory of the World), Միավորված Ազգերի Կրթության, Գիտության և Մշակույթի Կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) ծրագիր ՅՈՒՆԵՍԿՕ. Աշխարհի հիշողությունը. մեր վավերագրական ժառանգության պահպանումը, Փարիզ, 2021 [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%B7%D5%AD%D5%A1%D6%80%D5%B0%D5%AB_%D5%B0%D5%AB%D5%B7%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6, 12.10.2025:
2. Գրիգորյան Ա., Թանգարանային մանկավարժություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Էդիթ Պրինտ, Գիրք, 2019, 112 էջ:
3. Լիխաչով Դ., Ողջունի խոսք Մշակույթ հանդեսի հրատարակման առիթով // Մշակույթ, 1989, №1, էջ 3:
4. Հայաստանի ազգային գրադարան [Էլեկտրոնային աղբյուր] URL: <https://nla.am/printing-museum>, 22.10.2025:
5. Մատենադարան [Էլեկտրոնային հաղբյուր] URL: <https://matenadaran.am/>, 12.10.2025:
6. Մկրտչյան Գ., Աշխատանք ընթերցողների հետ: Ուսումնաօժանդակ ձեռնարկ կուլտուրայի ֆակուլտետի գրադարանային բաժնի ուսանողների համար, Երևան, Գիրք, 1979, 111 էջ:
7. Պետիկյան Ա., Գրադարանը օգնություն է հայցում // Կուլտուր-լուսավորական աշխատանք, 1988, №3, էջ 81-82:

8. Gutenberg Museum [Electronic Resource] URL: <https://www.mainz.de/microsite/gutenberg-museum-en/index.php>, 12.10.2025:
9. Musée de l'imprimerie et de la communication graphique [Electronic Resource] URL: <https://www.imprimerie.lyon.fr/fr> 23.10.2025.
10. National Museum of Classic Books [Electronic Resource] URL: https://www.tripadvisor.ru/Attraction_Review-g294212-d8660921-Reviews-National_Museum_of_Classic_Books-Beijing.html 19.10.2025.
11. Ванслова Е., Музей книги и проблемы музейной педагогики // Советский музей, 1986, № 1, С. 32–39.
12. Мелентьева Ю., Чтение: явление, процесс, деятельность // Отделение историко-филологических наук РАН, Научный совет РАН «История мировой культуры», Москва, Наука, Монография, 2010, 182 с.
13. Музей книги (Тбилиси) [Электронный ресурс] URL: [https://ru.wikipedia.org/wiki/%D0%9C%D1%83%D0%B7%D0%B5%D0%B9_%D0%BA%D0%BD%D0%B8%D0%B3%D0%B8_\(%D0%A2%D0%B1%D0%B8%D0%BB%D0%B8%D1%81%D0%B8\)](https://ru.wikipedia.org/wiki/%D0%9C%D1%83%D0%B7%D0%B5%D0%B9_%D0%BA%D0%BD%D0%B8%D0%B3%D0%B8_(%D0%A2%D0%B1%D0%B8%D0%BB%D0%B8%D1%81%D0%B8)) 21.10.2025.
14. Музей кукол и детской книги «Страна чудес» [Электронный ресурс] URL: <http://www.museum.ru/M2754> 22.10.25.
15. Столяров Б., Музейная педагогика. История, теория, практика: Учебное пособие, Москва, Книга, 2004, 216 с.

ԽԱՉՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐԻՆԱ

Երևան քաղաքի պատմության թանգարան

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԸՍՏ
«ЭРИВАНСКИЕ ОБЪЯВЛЕНИЯ» ԹԵՐԹԻ (1883-1917 թթ.)

Բանալի բառեր՝ թերթ, հայտարարություններ, Երևան, ֆրանսիական մոտիվներ, հրատարակիչ, մամուլ, տպագրություն, լուրեր:

Keywords: newspaper, announcements, Yerevan, French motives, publisher, press, printing, news.

Երևանի պարբերական մամուլի պատմության մեջ կարևոր դեր է խաղացել «Երևանի հայտարարություններ» թերթիկը, որը լույս է տեսել 1883 թվականից: Նրա հրատարակիչ-խմբագիրը դերասան, հասարակական գործիչ, թատերագիր Էմին Տեր-Գրիգորյանն էր: Էմին Տեր-Գրիգորյանը քաղաքի ամենահայտնի անձնավորություններից մեկն էր, ինչի մասին վկայում է այն փաստը, որ նրան հասցեագրած նամակների վրա ուղղակի գրում էին՝ Երևան, Էմին Տեր-Գրիգորյանին, առանց հասցեն նշելու: Սկզբում թերթիկը փոքր ծավալով էր, կես թերթի չափով: Դրանում սովորաբար տպագրվում էին քաղաքային լուրեր, տեղեկություններ տեղական շուկայի և ապրանքների գների մասին նաև անեկդոտներ: Թերթիկը հայերեն լեզվով տպագրելու համար Էմին Տեր-Գրիգորյանը պարտավորվել էր դրա պարունակած նյութերը սահմանափակել նշվածներով: Սակայն թերթիկի հայերեն հրատարակվելու փաստը դարձավ պատճառ, որ ցարական գրաքննչական օրգանների զեկուցագրերի հիման վրա մամուլի գլխավոր վարչությունը 1885 թ. հրաման արձակի թերթիկը փակելու մասին [Հակոբյան, 1963, 435]:



Թերթիկի հրատարակությունը ընդհատվում է ավելի քան 15 տարի: Տեր-Գրիգորյանը չէր հրաժարվել թերթ հրատարակելու մտադրությունից: Այս անգամ նա արդեն առաջ է քաշում թերթը ռուսերենով հրատարակելու հարցը: Այդպիսի զիջման գնով Տեր-Գրիգորյանին հաջողվում է 1900 թ.-ից մինչև 1917 թ. որոշ ընդհատումներով վերսկսել թերթիկի հրատարակությունը «Эриванские объявления» անունով: Սկզբում թերթիկը լույս

է տեսնում միայն ռուսերեն լեզվով և նրա բովանդակած նյութերը բաղկացած էին միայն տարբեր բնույթի հայտարարություններից, իսկ 1909 թվականից թերթը մշտապես դառնում է երկլեզվյան՝ հայերեն-ռուսերեն: Հայտարարություններից բացի սկսում են տպագրել նաև զանազան նյութեր քաղաքի կյանքից: Տպաքանակը 1000-3000 էր [Նույն տեղում, 436]: Յուրաքանչյուր հայտարարություն տպագրվում էր 10 կոպեկով, իսկ թերթը քաղաքացիներին տրվում էր անվճար:

«Երևանի հայտարարություններ» թերթը հարուստ շտեմարան է քաղաքային իշխանության գործունեության, երևանցիների կենցաղի, ժամանցի, առևտրի, առողջապահության և այլ ոլորտների վերաբերյալ: Ինչպես պարզվում է, թերթում կան նաև հետաքրքիր տեղեկություններ՝ Ֆրանսիային և ֆրանսերենին առնչվող: Խոսքը վերաբերվում է մասնավորապես հյուրանոցների, կինոթատրոնների, առևտրասրահների ֆրանսերեն կամ Ֆրանսիայի քաղաքների անուններով անվանումներին, ինչը թույլ է տալիս եզրակացնելու, որ ֆրանսիական մոտիվները լայնորեն արտահայտվել են երևանցիների կենցաղում: Պետք է նշել, որ այս տեսանկյունից, երբևէ «Երևանի հայտարարություններ» թերթին անրադարձ չի եղել:

20-րդ դարի սկզբին Երևանում գործում էր 11 հյուրանոց, որոնք բոլորն էլ մասնավոր էին, նրանցից մի քանիսն ունեին «Լիոն», «Ֆրանսիա», «Մարսել», «Գրանտ հոթել», «Օրիանտ» հինգեղ անվանումներ: Երևանում այս և մյուս հյուրանոցների ի հայտ գալը պայմանավորված էր՝

1. Արդյունաբերական, առևտրական և ֆինանսական ձեռնարկությունների ընդլայնմամբ,

2. Քաղաքի բնակչության թվի ավելացմամբ,

3. Երկաթուղու կառուցմամբ,


4. Մշակույթի ընդհանուր մակարդակի բարձրացմամբ:

Հյուրանոցների համար առանձին շենքեր չէին կառուցվում: Սովորաբար հյուրանոցների էին վերածվում նորակառույց շենքերի առանձին սենյակներ կամ ամբողջական հարկեր: Օրինակ, «Գրանտ հոթել» հյուրանոցը գտնվում էր Աստաֆյան (այժմ Աբովյան փողոց) N 7 տան երկրորդ հարկում:

Քաղաքի առաջին և ամենահայտնի հյուրանոցը «Օրիանտն» էր, այն պատկանում էր Գևորգ Խաչատրյանին և գտնվում էր այժմյան կառավարական նոր շենքի բակում (Վազգեն Սարգսյան 3):

«Լիոն» հյուրանոցը գտնվում էր նախկին Տեր-Ղուկասովի, այժմ Նալբանդյան փողոցի N 28 տանը: Դա մեկհարկանի կառույց էր, դեպի փողոց նայող 5 պատուհաններով: Կտուրի հատվածում տեղադրված էր «Лионъ» ցուցանակը: Հյուրանոցի նկուղային հարկում գործում էր Ա. Յալալովի գինու պահեստը, որն ուներ հետաքրքիր գովազդային ցուցանակ՝ «Ով ուզում է լինել առողջ, թող խմի բարձր պարզներ՝ ոսկե մեղալ և գրանդ-պրի շքանշան ստացած Ռիզայի «Սոլոսեկտ» շամպայնը, գինը 80 կոպեկ»:

«Մարսել» հյուրանոցը գտնվում էր Աստաֆյան փողոցի մի մասնավոր տան մեջ, իսկ Մկրտիչ Նալբանդյանին պատկանող «Ֆրանսիա» հյուրանոցը՝ քարավանատան երկրորդ հարկում:



1911 թ. «Ֆրանսիա» հյուրանոցի տակ բացվել էր Տուլայի արհեստանոցը, որտեղ նիկելապատում էին ինքնատեղերը: Թվարկված հյուրանոցներն ի տարբերություն նախկինում նույն նպատակներին ծառայող շենքերի, կառուցված էին ճարտարապետների նախագծած և քաղաքային վարչության կողմից հաստատված հատակագծերի հիման վրա: Նշենք, որ չնայած այս ամենին, հյուրանոցները չունեին իրենց ամպագոռգոռ անուններին համապատասխան հարմարությունները:

Հաջորդը առևտրի սրահներն են ու խանութները, որոնցից հայտնի էին Աստաֆյան 23 հասցեում գործող «Փարիզի նորություններ» կանացի գլխարկների և «Վեներա» նորաձևության խանութները: Այսպես, թերթի համարներից մեկում կարդում ենք. «կապված առևտրի կանգի հետ, «Փարիզի նորություններ» խանութում գներն իջեցված են մինիմումի» [Эриванские объявления, 1909 г., N 10], իսկ մյուս հայտարարությունում նշվում է, որ խանութը բոլոր տեսակի գլխարկները և կտորները վաճառում են 50 % զեղչով [Эриванские объявления, 1911 г., N 5]: Հետաքրքիր է 1913 թ. N 62-ում արված հայտարարությունը, որտեղ հանրությանը տեղեկացվում է, որ «Պարիժանկա» նորաձևության արհեստանոցը /Աստաֆյան-Ցարսկայա փողոցների անկյան N 25 շենքում/ ընդունում է կանանց և երեխաների զգեստների պատվերներ: Արհեստանոցը պատկանում էր Նատալյա Տեր-Արիստակեսյանին: Մեկ այլ հայտարարությունից տեղեկանում ենք, որ արհեստանոցը ստացել էր հատուկ սարքավորումներ և նյութեր

Թավիշի վրա նրբագեղ աշխատանքների կատարելու համար [Эриванские объявления, 1911 г., N 31]:



20-րդ դարասկզբին Երևանում գործում էին նաև դեղատներ, հիվանդանոցներ, անհատ բժիշկների մասնավոր բուժարաններ, որոնցից նշված թեմայի հետ կապ ունեցողներից կարելի է նշել ֆրանսիացի բժիշկ Բրոն Իվ. Ռուսոյին [Эриванские объявления, 1911 г., N 5]: Նա կատարում էր վիրաբուժական միջամտություն և մեղասեռական հիվանդությունների գծով հիվանդներին ընդունում էր ամեն օր, երեկոյան ժամը 17⁰⁰-20⁰⁰: Նշվում է նաև կլին ատամնաբույժ Ֆ. Շալիբոյի մասին, ով հիվանդներին ըստ կրոնական պատկանելության, ընդունում էր տարբեր ժամերի՝ առավոտյան 9-11-ը մահմեդականներին, մնացած ժամերին՝ քրիստոնյաներին:

Կենցաղային թեմայից հիշատակում կա «Բոմոնդ» ճաշարանի մասին, որը գտնվել է Բուլվարի դիմաց: Հայտարարության մեջ նշվում է, որ ճաշարանին «Անհրաժեշտ են արական և իգական սեռերի սպասավորներ, նաև մի հմուտ խոհարար»:

Հանրապետության հրապարակի շատրվանների տարածքում նախկինում կար մի ամառային ռեստորան ֆրանսիական «Փթի Շան» անունով, որը նշանակում է «Փոքրիկ հավաքատեղի»։ Ի դեպ, Փարիզում պահպանվել է նմանատիպ անվանումով փողոց, որը հատնի է իր սրճարաններով։ Հավանաբար հենց այս փարիզյան փողոցի հետ էլ կապված էր այդ ռեստորանի անվանումը։ «Փթի Շան» ռեստորանը բավականին բարեկարգ էր և գտնվում էր բանուկ վայրում։ Ռեստորանը հատկապես սիրված էր մտավորականների կողմից։ «Երևանի հայտարարություններ» թերթից իմանում ենք, որ «Մովսես» սրահում սանրվածքներն արվում են Փարիզի վերջին նորաձևության ամսագրերով և շատ մատչելի գներով։ Կանանց սանրվածքը՝ 1 ռուբլի։

Թերթի տարբեր համարներում կարելի է հանդիպել ֆրանսերեն լեզվի դասավանդման վերաբերյալ հայտարարությունների. «Կամենում եմ տալ ֆրանսերենի

1911 թ. N 60 թերթում հանդիպում ենք մի ուշագրավ հայտարարության, որում հաղորդվում էր, որ միայն երկու օր՝ «օգոստոսի 30-ին և 31-ին երեկոյան ժամը 20-23 նախկին քաղաքային ակումբում, Զանփոլադյանի շենքում նվագախմբի մասնակցությամբ կցուցադրվի բնության հրաշք-աղջիկը, որի մի կեսը մարդ է, մյուսը՝ կապիկ: Տոմսերի արժեքը՝ 20 կոպեկից - 1 ռուբլի: Բնության այս հրաշքը Երևան էին հասցրել Փարիզից, որտեղ էլ ուսումնասիրվել էր առաջատար մասնագետների կողմից» [Эриванские объявления, 1911 г., N 60]:



Հայտարարություններից տեղեկանում ենք նաև, որ Թիֆլիսում Ֆրանսիայի դեսպանը 1911 թ. հոկտեմբերին նամակ է ուղարկում հայ քաղաքական գործիչ, ապագայում Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի առաջին նախարար՝ Ա.Բ. Խատիսյանին: Նամակում դեսպանը ֆրանսիացի գործարարների անունից առաջարկում է կնքել 15 միլիոն ռուբլի փոխառություն տալու պայմանագիր:

Մի հետաքրքիր տեղեկատվություն ևս. 20-րդ դարասկզբին Երևանում շատ նորաձև էին ֆրանսիական «բուդուարային», կամ «մահճակալային» տիկնիկները, որոնք զարդարում էին կանանց հանդերձասենյակները: Նման տիկնիկների թիվս բազմաթիվ արդուզարդի պարագաների, կարելի էր ձեռք բերել «Նադեժդա» խանութից:



Ահա այսպիսին էր ֆրանսիայի «ներկայությունը» 19-րդ դարի վերջ և 20-րդ դարի սկզբի Երևանում ըստ «Эриванские объявления» թերթի:

SUMMARY

The “Yerevan Announcements” newspaper, published since 1883, played an important role in the history of Yerevan's periodical press. Its publisher and editor was actor, public figure, and playwright Emin Ter-Grigoryan. The newspaper was published with some interruptions until 1917, initially only in Russian, and from 1909 it became consistently bilingual, in Armenian and Russian. As it turns out, the newspaper contains interesting information related to France and the French language. This refers in particular to the names of hotels, cinemas, and shopping malls in French or named after French cities, which allows us to conclude that French motifs were widely expressed in the everyday life of Yerevan residents. It should be noted that from this perspective, there has never been any reference to the “Yerevan Announcements” newspaper.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հակոբյան Թ., Երևանի պատմությունը 1879-1917 թթ., Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1963 թ., 607 էջ:
2. Эриванские объявления, 1911 г., N 5:
3. Эриванские объявления, 1911 г., N 31:
4. Эриванские объявления, 1909 г., N 10:
5. Эриванские объявления, 1911 г., N 48:
6. Эриванские объявления, 1911 г., N 60:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄՀԵՐ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
Հայաստանի պատմության թանգարան
«Կաճառ» գիտական կենտրոն

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՐԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ
ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Բանալի բառեր՝ Լեռնային Ղարաբաղ, մարգային գրադարան, մատենագիտություն, ընթերցանության մշակույթ, հասարակական հիշողություն, կրթական միջավայր, ֆոնդեր, մեթոդական գործունեություն, երկրագիտություն, մշակութային ժառանգություն:
Keywords: Nagorno-Karabakh, regional library, bibliography, reading culture, public memory, educational environment, library collections, methodological activity, local studies, cultural heritage.

Ներածություն

Լեռնային Ղարաբաղի մարգային գրադարանը խորհրդային շրջանում տարածաշրջանի մշակութային, կրթական և գաղափարական քաղաքականության հիմնական օղակներից մեկն էր: Նրա ձևավորումն ու զարգացումը սերտորեն կապված են եղել ինչպես պետական մշակութային ծրագրերի, այնպես էլ Արցախի բնակչության կրթամշակութային պահանջների հետ:

Գրադարանների պատմությունը միշտ էլ եղել է հանրային հիշողության արտացոլումը. դրանք ոչ միայն գիտելիքի պահոցներ են, այլև հասարակության մշակութային և քաղաքական ինքնության ձևավորման վայրեր: Այդ տեսանկյունից Լեռնային Ղարաբաղի մարգային գրադարանը ուներ յուրահատուկ նշանակություն՝ իբրև մի այնպիսի հաստատություն, որտեղ ձևավորվել է **տեղային ինքնագիտակցության, ընթերցանության մշակույթի և հանրային կրթության համադրված համակարգը:**

Լեռնային Ղարաբաղի մարգային գրադարանը ներկայացնում է կարևոր պատմամշակութային և գիտակրթական ինստիտուտ, որը երկար տարիներ ծառայել է որպես համայնքային գիտելիքի, կրթության և մշակութային ժառանգության կենտրոն: Արցախի բռնազավթումից և արցախցիների տեղահանությունից հետո՝ գրադարանի պատմությունը և փորձը դարձել են առավել արժեքավոր որպես համայնքային հիշողության ու ինքնության պահպանման խորհրդանիշ: Նրա գրքերի, պարբերականների, ձեռագրերի և մտավոր հարստության երբեմնի հավաքածուները ներկայացնում են հայրենի եզերքի մշակութային ու գիտական ժառանգությունը, ինչն առանձնահատուկ կարևորություն է ստանում հիշողության հետազոտությունների և տեղական փորձի վերլուծության տեսանկյունից:

Այս թեմայի ուսումնասիրությունն ունի գիտակիրառական նշանակություն, քանի որ այն թույլ է տալիս համակարգել և գնահատել Լեռնային Ղարաբաղի մարգային

գրադարանի փորձը՝ իբրև գիտակրթական և հիշողության ինստիտուտ, ինչպես նաև ձևավորել ամուր հիմքեր համայնքային կրթության, մշակութային զարգացման և պատմական հիշողության պահպանման հետագա գործունեության համար:

Հոդվածի նպատակն է վերլուծել մարզային գրադարանի դերը՝ որպես կրթամշակութային և հանրային հիշողության ինստիտուտ՝ բացահայտելով դրա գործունեության կառուցվածքը, հիմնական ուղղությունները և ազդեցությունը հանրային գիտակցության վրա:

Սույն հոդվածի ժամանակագրական շրջանակն ընդգրկում է 1920-80-ական թվականները, որպես մարզային գրադարանի պատմության առանցքային ժամանակամիջոց՝ ստեղծումից մինչև կայացում և զարգացում: Հետագա փոխակերպումները, մանավանդ Արցախյան շարժման և անկախ պետականության շինարարության տարիները համարում ենք առանձին ուսումնասիրության նյութ՝ ելնելով պատմական միջավայրի և, առհասարակ, համաժողովրդական զարթոնքի ալիքի վրա, ազգային մշակույթի զարգացման առանձնահատկություններից:

Մինչև Շուշի քաղաքի 1920 թ. բարբարոսական ավերումը և հայկական մշակույթի ոսկե դարի ընդհատումը եղած Արցախի գրադարանների մասին գրել են Ռ. Տեր-Գասպարյանը [Տեր-Գասպարյան, 1993, 121-123], Է. Դանիելյանը [Դանիելյան, 2005, 299-301], Վ. Բալայանը [Բալայան, 2017, 238-240] և այլ ուսումնասիրողներ:

Արցախի Հանրապետության օրոք հանրապետական, համայնքային, գերատեսչական և ուսումնական հաստատությունների գրադարանների մասին ուշագրավ տեղեկություններ կան Հայաստանի գրադարանների աշխատանքների վիճակագրական վերլուծությունների մատենաշարում Արցախի գրադարաններին նվիրված էջերում [Արցախի գրադարանների մասին, 2016, 91-92, Արցախի գրադարանների մասին, 2017, 97-98, Արցախի գրադարանների մասին, 2022, 95-97], հանրագիտարանային հրատարակություններում [Հայ գրատպություն և գրքարվեստ, 2015, 463, 983-984], Գ. Սուքիասյանի [Սուքիասյան, 2014, 15-24, Սուքիասյան, 2020, Սուքիասյան, 2024, 303-312], Ի. Առաքելյանի [Առաքելյան, 2025, 73-78] հրապարակումներում: Թեմայի վերաբերյալ տեղեկություններ կարելի է գտնել Ս. Կարապետյանի [Կարապետյան, 1962], Ս. Ավագյանի [Ավագյան, 1982], Ա. Մարտիրոսյանի [Մարտիրոսյան, 1989] և այլ հեղինակների աշխատանքներում:

Մեր ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքն են կազմել ինչպես նշված մասնագիտական գրականությունը, այնպես էլ «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվում պահպանված Արտո Մարտիրոսյանի «**ԼՂԻՄ Մ. Գորկու անվան մարզային գրադարանի պատմությունից**» վերնագրով աշխատանքի հատվածական էջերը, որոնք կարելի է համարել եզակի վավերագրական աղբյուր [Մարտիրոսյան, 1987, 1-76]:

Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանի ձևավորումը և հասարակական դերը

Գրադարանի ձևավորումը սկսվում է 1920-ական թվականների կեսերին, երբ այն աստիճանաբար դառնում է մարզի գաղափարական և կրթական աշխատանքի

կազմակերպման կենտրոն: Սկզբնական շրջանում նրա գործունեությունը սահմանափակվում էր գրքի հանրահռչակմամբ և մատենագիտական տեղեկատվության տարածմամբ, սակայն շուտով այն վերածվեց կրթամեթոդական ու դաստիարակչական հաստատության:

Գրադարանի հիմնական առաքելությունը գիտելիքի հանրայնացումն էր: Գրքային ֆոնդերի համալրումը, գրականության թարգմանությունն ու հասանելիությունը ապահովում էին հասարակության կրթական առաջընթացը: Արդեն 1930-ական թվականներին այն ուներ շուրջ 400 ընթերցող, իսկ 1980-ականներին՝ հազարավոր հաճախորդներ:

Գրադարանը դարձավ նաև **բազմալեզու կրթամշակութային միջավայր**, քանի որ սպասարկումն իրականացվում էր հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով, ինչը նպաստում էր գրքի և կրթության տարածմանը տարբեր ազգային համայնքների միջև:

ԼՂ մարզային գրադարանի պատմությունը վկայում է, որ գրքի տարածման գործը խորհրդային շրջանում ուներ ոչ միայն կրթական, այլև գաղափարական նշանակություն: Գրադարանը որպես պետական մշակութային քաղաքականության գործիք՝ միաժամանակ իրականացնում էր տեղական ինքնության ձևավորման գործընթաց:

Այն ապահովում էր գիտելիքի հասանելիություն բազմալեզու բնակչության համար, ստեղծում էր ընթերցողական վարքագծի նոր ձևեր և նպաստում ինտելեկտուալ միջավայրի ձևավորմանը, որը հետագայում դառնում էր Արցախյան մշակութային ինքնագիտակցության կարևոր բաղադրիչ:

Այսօր, հետադարձ հայացքով գնահատելով այդ գործընթացները, կարելի է եզրակացնել, որ ԼՂ մարզային գրադարանը՝ իր երկարամյա փորձով և ձևավորված ավանդույթներով, հանրային հիշողության կարևոր հաստատություններից էր: Այն ոչ միայն հարատևեց և զարգացրեց բնիկ հայ բնակչությամբ տարածաշրջանի գրքային մշակույթը, այլև զգալի ներդրում ունեցավ ազգային ինքնության պահպանման, ինչպես նաև վերջինիս առաջ ծառացած բազմաբնույթ մարտահրավերներին դիմագրավելու պատմության մեջ:

Աշխատանք ընթերցողների հետ և մասսայական միջոցառումներ

Գրադարանի՝ ընթերցանությունն ըստ ամենայնի խթանելու քաղաքականությունը հիմնված էր գրքի՝ որպես գաղափարական և մշակութային արժեքի ընկալման վրա: Այն կազմակերպում էր տարաբնույթ կոնֆերանսներ, գրքերի քննարկումներ, գրական երեկոներ և հանդիպումներ՝ նվիրված հայ և օտար հեղինակների ստեղծագործություններին:

Այս միջոցառումները ոչ միայն զարգացնում էին ընթերցողական հետաքրքրությունները, այլև նպաստում **բանավոր խոսքի և գրավոր մշակույթի բարձրացմանը**, կրթում էին լայն հասարակական լսարանին:

Գրադարանը սերտ կապերի մեջ էր մարզի մտավորականության հետ. գրողները, ուսուցիչները, բժիշկներն ու ուսանողները մասնակցում էին քննարկումներին,

զեկուցումներին ու ստեղծագործական երեկոներին՝ դարձնելով գրադարանը հանրային երկխոսության կենտրոն:

Այս ձևաչափով ընթերցանությունը ստացավ հանրային բնույթ՝ վերածվելով **մշակութային հաղորդակցության ձևի**, որը գերազանցում էր կրթության սահմանները և նպաստում էր սոցիալական համախմբմանը:

ԼՂ մարզային գրադարանի մասսայական աշխատանքը խորհրդային մշակութային համակարգում յուրահատուկ դեր էր կատարում. այն ոչ միայն ապահովում էր գաղափարական վերահսկողություն և ընթերցողական համախմբում, այլև ստեղծում էր հանրային հաղորդակցության ու ինքնադրսևորման հարթակ, որտեղ քաղաքացին վերածվում էր ընթերցողի, իսկ ընթերցողը՝ մասնակցի:

Այս երևույթը կարելի է դիտարկել որպես ժողովրդավարացման ձև՝ մշակութային ոլորտում, որը, թեև կաղապարվում էր գաղափարական շրջանակներով, իրականում նպաստում էր մտավոր ներուժի համախմբմանը և հասարակական կյանքի ինտելեկտուալացմանը:

Այս իմաստով Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանը ոչ միայն որպես կրթական հաստատություն էր, այլև որպես հիշողության և ինքնության պահպանման ինստիտուցիոնալ միջավայր, որն իր բազմամյա գործունեությամբ ամրապնդեց գրքի և մշակույթի հանրային դերը Արցախի կրթամշակութային կյանքում:

Գրքային ֆոնդերի ձևավորումը և աղբյուրագիտական նշանակությունը

Գրադարանի գրքային ֆոնդերի աճը տպավորիչ էր. 1946 թ. այն ուներ շուրջ 14 հազար միավոր, իսկ 1956 թ.՝ արդեն 64 հազար: Նվիրատվությունները, պետական հատկացումները և մասնավոր նախաձեռնությունները հարստացնում էին ֆոնդերը՝ ընդգրկելով ոչ միայն դասական, այլև գիտական և հանրամատչելի գրականություն:

Ֆոնդերի մեջ առանձնակի տեղ էին զբաղեցնում մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների աշխատությունները, հանրագիտարաններ, բառարաններ, ինչպես նաև տեղական հրատարակություններ: 1960-ականներից գրադարանն արդեն ստանում էր պարբերական մամուլի պարտադիր օրինակները, որոնցից ձևավորվեց մամուլի հարուստ արխիվ:

Հատուկ տեղ էր հատկացված նվիրատվությունների ֆոնդին, որտեղ պահվում էին եզակի և հազվագյուտ հրատարակություններ՝ ստացված ինչպես ակադեմիական շրջանակներից, այնպես էլ մտավորականներից և գրողներից:

Նշանավոր նվիրատուների թվում էին ակադեմիկոս Ա. Առաքելյանը, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Հ. Գալաչյանը, դոցենտ Ա. Օհանյանը, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ա. Մովսեսյանը, իրավաբան Գ. Հախումյանը, հին կոմունիստ Հ. Տեր-Սարկիսովը, տնտեսագիտության դոկտոր-պրոֆեսոր Ռ. Դանիելյանը, ինչպես նաև գրողներ Լ. Հուրունցը, Ա. Գրաշին, Ս. Գրիգորյանը, Մ. Հարությունյանը և շատ ուրիշներ [Մարտիրոսյան, 1987, 8]: Այս տեղեկություններին կարելի է հանդիպել նաև գրադարանի նախկին տնօրեն Ս.

Կարապետյանի գրքում, որտեղ արձանագրված է, որ «մեծ քանակությամբ գրականություն ենք ստացել Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանից» [Կարապետյան 1962, 8]:

Այս նվիրատվությունները ձևավորեցին յուրատեսակ հուշագրադարանային շերտ, որտեղ յուրաքանչյուր գիրք արտացոլում էր անհատի գիտելիքի և հայրենասիրության ներդրումը հասարակական կրթության գործում:

Գրադարանն այդ կերպ ստեղծեց յուրատեսակ **պատմամշակութային հիշողության ֆոնդ**, որը պահպանեց և փոխանցեց ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային գիտելիքը:

Տեղեկատու-մատենագիտական գործունեությունը որպես հիշողության համակարգ

Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանի տեղեկատու-մատենագիտական աշխատանքը ձևավորվեց 1950-ական թվականներից: Այն ներառում էր նոր գրականության քարտարանների, երաշխավորական ցանկերի, երկրագիտական ֆոնդերի և տեղեկատուների ստեղծումը:

Այս աշխատանքը նպաստեց ոչ միայն տեղեկատվության համակարգմանը, այլև գիտական աղբյուրագիտության զարգացմանը:

Գրադարանում ձևավորվեցին շուրջ **40 թեմատիկ քարտարան**, ինչպես նաև **անհատական** քարտարաններ, որոնք պարունակում էին տվյալներ նշանավոր գործիչների և գիտնականների մասին: Այս աշխատանքը ձևավորեց յուրատեսակ տեղեկատվական դիմապատկեր հայ մտավորականության և Արցախի մշակութային կյանքի համար, ինչն ընթերցողին ընձեռում էր անհատականացված ճանաչողական հնարավորություն:

1952 թվականից սկսած, մարզային գրադարանը կապ հաստատեց միութենական (Մոսկվայի, Լենինգրադի) և հանրապետական (Երևանի) առաջատար գրադարանների հետ՝ ստանալով նրանցից տարեգրքեր, պաստառներ, օրացույցներ և մամուլի թեմատիկ հավաքածուներ: Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական և այլ գրադարաններից ստացված նյութերը համալրեցին գրադարանի համապատասխան ֆոնդերը և բաժինները: Այս համագործակցությունը նպաստեց տեղեկատվական փոխանակման և գրադարանների միջև մասնագիտական կապերի խորացմանը:

Այս գործունեությունը գրադարանը վերածեց գիտական հիշողության կենտրոնի, որտեղ փաստագրվում էր Արցախի մտավոր և մշակութային կյանքը:

Ստեղծվեց նաև թերթերի և ամսագրերի հոդվածների սիստեմատիկ գրացուցակ՝ ըստ գիտության ճյուղերի: Ամեն տարի քարտագրվում էր շուրջ 2500 միավոր նյութ, ինչպես նաև ավելացվում էին ավելի քան 12 հազար ռուսական պարբերականների տպագիր քարտեր: Սա վկայում է, որ գրադարանը ոչ միայն հավաքում, այլև մշակում էր տեղեկատվությունը՝ այն վերածելով գիտահանրամատչելի մատենագիտական արտադրանքի:

Երկրագիտական աշխատանք

Գրադարանի մատենագիտական գործունեության կարևոր բաղադրիչն էր երկրագիտական ուղղությունը, որը սկիզբ առավ կուլտուրայի վաստակավոր գործիչ, գրադարանի նախկին տնօրեն Սուրեն Կարապետյանի նախաձեռնությամբ: Նա նախաձեռնել էր նամակագրական կապ միության տարբեր քաղաքներում ապրող արցախցի նշանավոր անձանց՝ գիտնականների, գրողների, հասարակական գործիչների հետ: Վերջիններս հայրենասիրական պարտքի զգացումով գրադարանին էին ուղարկում ոչ միայն իրենց աշխատությունները և կենսագրական տվյալները, այլև՝ հազվագյուտ գրականություն, լուսանկարներ և ձեռագրեր, որոնք վերածվեցին տեղական պատմության վավերագրական բազայի:

Տարիների ընթացքում գրադարանում կուտակվեց զգալի քանակությամբ երկրագիտական նյութ: Ուսումնասիրվեցին և առանձնացվեցին Լեոնային Ղարաբաղի մասին գրքերը, արցախցի հեղինակների ստեղծագործությունները, պարբերական մամուլից և գրքերից քաղվեցին տեղական պատմությանը վերաբերող ուշագրավ նյութեր, որոնք համախմբվեցին երկրագիտական ֆոնդի և քարտարանի մեջ [Խմբագրական, Կաճառ, 7, 2015, 106-108]:

Այս գործընթացը դարձավ Արցախում տեղական ինքնության գիտական ուսումնասիրության նախնական ձևերից մեկը՝ որպես գրադարանի միջոցով ձևավորված համայնքային հիշողության գիտաբանական համակարգ:

Բացի այդ, մարզային գրադարանը կազմեց արցախցի մի շարք գրողների և բժիշկների մատենագիտություններ՝ փաստելով նրանց գործունեության գիտական արձանագրությունը և նպաստելով տեղական գիտական ժառանգության պահպանմանը [Մարտիրոսյան, 1987, 11]:

Այսպիսով, տեղեկատու-մատենագիտական գործունեությունը Լեոնային Ղարաբաղի մարզային գրադարանում ոչ միայն ապահովում էր գրքի և տեղեկատվության շրջանառությունը, այլև վերածվել էր գիտաճանաչողական և պատմական հիշողության գործառույթների իրականացնող ինստիտուցիոնալ կառույցի: Այն ձևավորեց գիտելիքի կազմակերպման նոր մշակույթ, որտեղ մատենագիտությունը ծառայեց ոչ թե վարչական հաշվառման, այլ գիտական և ազգային ինքնության պահպանման նպատակին:

Մատենագիտության և երկրագիտության փոխկապակցված զարգացումը գրադարանը վերածեց Արցախի ինքնաճանաչման կենտրոնի, որտեղ յուրաքանչյուր գրքույկ, քարտարան կամ տեղեկանք դառնում էր վավերագրական ապացույց տարածաշրջանի հոգևոր-մշակութային կենսունակության և պատմական հիշողության անընդհատության մասին:

Մեթոդական և գրադարանագիտական գործունեությունը

Լեոնային Ղարաբաղի մարզային գրադարանն աստիճանաբար դարձավ ոչ միայն ընթերցողական և տեղեկատու կենտրոն, այլև մարզի գրադարանային գործի գլխավոր

կազմակերպիչն ու համակարգող մարմինը: Նրա գործունեությունը դուրս էր գալիս տեղական կառույցի սահմաններից՝ ընդգրկելով ամբողջ մարզի գրադարանային համակարգը՝ անկախ գրադարանների վարչական ենթակայությունից:

Գրադարանն իր վրա էր վերցրել մարզի գրադարանային համակարգի մեթոդական առաջնորդությունը՝ կազմակերպելով դասընթացներ, խորհրդատվություններ, տեսական քննարկումներ: 1957 թ. ստեղծվեց մեթոդիստի հաստիք, իսկ 1960–70-ական թվականներին մարզային գրադարանը դարձավ գրադարանային փորձի տարածման կենտրոն [Մարտիրոսյան, 1987, 12]:

Մարզային գրադարանը հատուկ ուշադրություն էր դարձնում մեթոդական նամակների, մատենագիտական ցանկերի, հիշարժան տարեթվերի օրացույցների, ինչպես նաև խորհրդատվական նյութերի պատրաստմանն ու շրջանառմանը: Դրանք պարբերաբար ուղարկվում էին մարզի համայնքային և գյուղական գրադարաններին՝ նպաստելով մասնագիտական աշխատանքի որակի բարձրացմանը:

ԽՍՀՄ Կենտրոնական կոմիտեի 1959 և 1974 թթ. որոշումները գրադարանային գործունեության զարգացման նոր փուլի սկիզբ դրեցին: Դրանց հիման վրա մարզային գրադարանը բարելավեց ֆոնդերի կառավարման մեխանիզմները, ներդրեց բաց դարակային սպասարկման համակարգ, կազմակերպեց մասնագիտական խորհրդատվություն և ակտիվ մշակութային միջոցառումներ: Այս քայլերը նպաստեցին ոչ միայն գրքի շրջանառության աճին, այլ նաև ընթերցողական մշակույթի խորացմանը՝ գրադարանը վերածելով **հասարակական հաղորդակցության կրթական միջավայրի**: Ըստ երևույթին, փոփոխվեց նաև գրադարանային մտածողությունը՝ գրադարանը **հասարակական կրթության և գաղափարական հաղորդակցության կենտրոնի** վերածելու առումով:

Հետևելով վերադաս մարմինների ընդունած համապատասխան որոշումներին՝ Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանն իր առաքելությունն էր համարում գիտության ու տեխնիկայի նվաճումները, մշակույթի և արվեստի արժեքները ընթերցողների լայն շրջանակների համար հանրայնացնելը՝ ձևավորելով կրթական և գաղափարական շարունակականության միջավայր:

Այդպիսով, գրադարանն իր գործունեության մեջ կարևոր նշանակություն տալով նաև լավագույն փորձի և տեսական հարցերի լուսաբանմանը, դրանք պարբերաբար ներկայացնում էր մամուլում և ռադիոյով՝ նպաստելով գրադարանային աշխատանքի հանրայնացմանը և մասնագիտական ինքնագիտակցության բարձրացմանը:

Այս մեթոդական աշխատանքների շնորհիվ գրադարանը ձևավորվեց որպես գրադարանագիտական հարթակ, որտեղ համադրվում էին տեսական գիտելիքն ու գործնական փորձը՝ գրքի մշակույթի տարածման համար:

Եզրակացություն

Լեռնային Ղարաբաղի մարզային գրադարանը 20-րդ դարի երկրորդ կեսին ձևավորվեց որպես ինքնուրույն մշակութային և կրթական հաստատություն, որը

միաժամանակ կրում էր պետական քաղաքականության, հանրակրթական և ազգային ինքնության հետքեր: Այն ապահովում էր գիտելիքի շրջանառություն, հավաքում տեղական ժառանգությունը, և իր ֆոնդերի միջոցով կառուցում հանրային հիշողության հարթություն:

Ներկայումս, երբ մշակութային ժառանգության պահպանության խնդիրները նորից դառնում են արդիական, մարզային գրադարանի փորձը վկայում է, որ **գրադարանային գործը ոչ միայն տեղեկատվության տարածման միջոց է, այլև ազգային հիշողության պահպանման ձև:** Գրադարանը իր պատմական անցած ճանապարհով ցույց է տալիս, որ տեղական ինքնության գիտական վավերագրումը կարող է իրականացվել ոչ միայն ակադեմիական, այլև գրադարանային հարթակներում:

SUMMARY

The article is devoted to the analysis of the formation, historical development, and cultural role of the M. Gorky Regional Library of Nagorno-Karabakh as an educational, social, and cultural-scientific institution. It is noted that during the 1920s-1980s, the library functioned as one of the key centers of cultural life in Artsakh, where the processes of reading, knowledge dissemination, bibliographic activity, and the preservation of national identity were closely intertwined. The study examines the library's main directions of activity as a bearer of public memory and a hub of cultural communication, emphasizing its contribution to the formation of the educational environment, the dissemination of scientific thought, and the maintenance of national self-awareness. The model of preserving and transmitting the local cultural-scientific heritage established by the library may serve as an example for the future, particularly in the context of the collective return of the people of Artsakh and the realization of their right to self-determination.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Առաքելյան Ի., Համառոտ ակնարկ Արցախի գրադարանների, հայկական տպագրական մշակույթի ու մատենագիտության զարգացման մասին // Չուբարյանական ընթերցումներ՝ նվիրված ականավոր գրադարանագետ Օհան Ստեփանի Չուբարյանին և գրադարանային-տեղեկատվական ու մատենագիտական զարգացման ժամանակակից հարցերին (18 հոկտեմբերի 2024 թ.), Գիտաժողովի զեկուցումների ժողովածու, կազմ.՝ Գ. Ա. Սուքիասյան, Երևան, հեղ. հրատ., 2025, էջ 73-78:
2. Ավագյան Ս., Էջեր Լեոնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից, Երևան, Հայաստան, 1982, 106 էջ:
3. Արցախի գրադարանների մասին // Հայաստանի գրադարանները 2015 թ., Աշխատանքների վիճակագրական վերլուծություն, կազմ.՝ Ա. Բաղդասարյան, Երևան, Գիրք, 2016, էջ 91-92:

4. Արցախի գրադարանների մասին // Հայաստանի գրադարանները 2016 թ., Աշխատանքների վիճակագրական վերլուծություն / կազմ.՝ Ա. Բաղդասարյան, Լ. Մուրադյան, Երևան, Գիրք, 2017, էջ 97-98:
5. Արցախի գրադարանների մասին // Հայաստանի գրադարանները 2021 թ., Աշխատանքների վիճակագրական վերլուծություն / կազմ.՝ Լ. Մուրադյան, Երևան, Գիրք, 2022, էջ 95-97:
6. Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, Զանգակ, 2017, 590 էջ:
7. Կարապետյան Ս., Խմբագրական, «Կաճառ» տարեգիրք, 7, 2015, էջ 106-108:
8. Կարապետյան, Ս., Լեոնային Ղարաբաղի Մ. Գորկու անվան մարզային գրադարանում, Ստեփանակերտ, ա. հ., 1962, 50 էջ:
9. Հայ գրատպություն և գրքարվեստ. հանրագիտարան: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա: Գիտահրատարակչական խորհուրդ՝ Հ. Մ. Այվազյան (գլխ. խմբագիր) և ուրիշներ, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2015, 1120 էջ:
10. Մարտիրոսյան Ա., ԼՂԻՄ Մ. Գորկու անվան մարզային գրադարանի պատմությունից, Ստեփանակերտ, 1987 (անտիպ): «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, Արտո Սամվելի Մարտիրոսյանի անձնական ծագման ֆոնդ, № 53, գ. № 1, էջ 1-76:
11. Մարտիրոսյան Ա., Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզի ԳՀԿ-ները 1977-1986 թվականներին (Ակնարկներ, աշխատանքների վերլուծություն և մեթոդական հանձնարարականներ), Ստեփանակերտ, ա. հ., 1989, 41 էջ:
12. Սուքիասյան Գ., Գիրքը և գրադարանը Արցախի պատմության մեջ // Շուշին՝ հայկական մշակույթի օջախ, Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ, «Կաճառ» տարեգիրք, 6, Շուշի, 2014, էջ 15-24:
13. Սուքիասյան Գ., Գիրքը և գրադարանային-տեղեկատվական մշակույթը Արցախում, Երևան, հեղ. հրատ., 2020, 107 էջ:
14. Սուքիասյան Գ., Գրքերի և գրադարանների ճակատագիրը Արցախյան պատերազմներում // Սուրբ Էջմիածինը՝ գրքի հանգրվան: Գիտաժողով՝ նվիրված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի հիմնադրման 10-ամյակին (6 հոկտեմբերի 2022 թ.): Զեկույցների ժողովածու, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2024, էջ 303-312:
15. Տեր-Գասպարյան Ռ., Շուշի քաղաքը, խմբ.՝ Պ. Մ. Մուրադյան, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1993, 125 էջ:

ՄԱՐՈՒԹՅԱՆ ԹԵԶՄԻՆԱ

Սյունիքի գիտամշակութային զարգացման հիմնադրամ
Ակսել Բակունցի տուն-թանգարան

ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ.
ՀԱՅԿ ԴԱՆԴՅԱՆ ԵՎ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Բանալի բառեր՝ Ակսել Բակունց, Հայկ Դանդյան, թանգարանային ժառանգություն, նվիրվածություն, բնաձնշումների տարիներ, հրատարակությունների փրկություն, գրական հիշողություն, արխիվային վավերագրեր, թանգարանագիտություն, մշակութային հիշողություն:

Keywords: Aksel Bakunts, Hayk Danghyan, museum heritage, dedication, years of repression, preservation of publications, literary memory, archival documents, museum studies, cultural memory.

*«1956 թվից հայ գրական մեծերի հետ Ձեզ էլ եմ դասարան տարել
և իմ սաների զգայուն հոգիներին հաղորդակից դարձրել
Ձեր շենշող ստեղծագործությունների կախարդական հմայքը...»*

Հայկ Դանդյան

Ակսել Բակունցի տուն-թանգարանը ստեղծվել է մարդկային նվիրման և հոգատարության շնորհիվ: Իր հիմնադրումից ի վեր այն ձևավորվել է բացառապես նվիրյալների ջանքերով՝ տարիների ընթացքում համալրվելով արժեքավոր ցուցանմուշներով, ձեռագրերով ու գրքերով:

Գրողի ժառանգությունը պահպանելու ճանապարհի առաջնագծում էր նրա եղբայրը՝ Վահան Բակունցը, որի անդադրում հոգատարությունն ու հավատարմությունը դարձան թանգարանի ձևավորման հիմքը: Հետագայում նրա օրինակին հետևել են Բակունցի մտերիմ ընկերները, հարազատները և այն ազնվագույն մարդիկ, որոնք տարբեր ճանապարհներով առնչվել էին գրողի կյանքին ու գործունեությանը: Այս մարդկանց շնորհիվ են ժամանակի փորձություններին դիմակայել ու մեզ հասել անփոխարինելի արժեքներ:

Թանգարանի յուրաքանչյուր ցուցանմուշ ունի իր պատմությունը՝ երբեմն՝ դեպքերի, երբեմն՝ մարդկային հոգիների պատմությունը: Այդ պատմությունները միաժամանակ վկայում են, թե ինչպես կարելի է հավատարմությամբ և սիրով պահպանել ոչ միայն գրական ժառանգությունը, այլև ազգային հիշողությունը:

Ակսել Բակունցի տուն-թանգարանի նվիրյալների մեջ առանձնահատուկ տեղ ունի Հայկ Դանդյանի անունը: Ծնվելով 1904 թվականին Էջմիածնում՝ Դանդյանը երկար

տարիներ դասավանդել է հայ գրականություն էջմիածնի մանկավարժական ուսումնարանում և Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում: Նա եղել է նուրբ մտածողությամբ մանկավարժ, մտերմացել է հայ գրականության և մշակույթի շատ գործիչների հետ, արժանացել է պետական պարգևների, իսկ 1965 թվականին ստացել է ՀԽՍՀ վաստակավոր ուսուցչի կոչում:

Դանդյանը ոչ միայն գրականության սիրահար էր, այլև Ակսել Բակունցի տաղանդի իրական գնահատողը: Նրա շնորհիվ կորստից փրկվել և Բակունցի տուն-թանգարանին են հանձնվել երեք արժեքավոր հրատարակություններ, որոնք լույս են տեսել գրողի կենդանության օրոք.

1. *Ա. Բակունց, Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայումը», Ե., Պետհրատ, 1932 թ.,*
2. *Ն. Գոգոլ, Տարաս Բուլբա (հայերեն թարգմանությունը և առաջաբանը՝ Ա. Բակունցի), Ե., Պետհրատ, 1934 թ.,*
3. *Ջոնաթան Սվիֆտ, Գուլիվերի ճանապարհորդությունը (թարգմանիչ՝ Կարեն Միքայելյան, խմբագիր և առաջաբանի հեղինակ՝ Ա. Բակունց), Ե., Պետհրատ, 1934 թ.:*

Այս գրքերը, հրատարակված նախքան գրողի գնդակահարությունը, խորհրդանշում են ոչ միայն Բակունցի ստեղծագործական հզոր ընթացքը, այլև այն պատմական խիզախությունը, որով նման արժեքները հնարավոր է եղել պահպանել 1930-ականների ահուսարսափ տարիներին:

Ինչպե՞ս են դրանք փրկվել բռնաճնշումների մրրիկից և ինչպե՞ս են հասել թանգարան — այս հարցերին է նվիրված հրապարակումը՝ հիմնված արխիվային փաստաթղթերի և Հայկ Դանդյանի ձեռագրային ժառանգության վրա:

1981 թվականի փետրվարի 13-ին Հայկ Դանդյանը նամակ է գրել թանգարանի հիմնադիր տնօրեն Քաջիկ Միքայելյանին, որտեղ գրողի նկատմամբ իր խոր հարգանքով է արտահայտվել.

«Մեծարգո՝ ընկեր,

թանգարանին եմ ուղարկում իմ վերնուշներն ու խոհերը մեծ գրողի մասին:

Անցնող ժամանակի հետ պակասում են Բակունցին հանդիպողների թիվը:

Ուրեմն՝ ինչ հնարավոր է, թող փրկվի մոռացությունից» [Ակսել Բակունցի տուն թանգարանի գիտաօժանդակ ֆոնդ]:

Դանդյանի հուշագրությունը յուրահատուկ գրույց է՝ ուղղված Բակունցին: Նրա պատմությունն ինքնին դարձել է մի նոր վավերագիր՝ գրողի հիշատակի պահպանման անսպառ նվիրվածության մասին: «Ես շատ անգամ եմ տեսել և հանդիպել Ձեզ: Առաջին անգամ այդ 1926 թվի ամռանն էր: Ես Պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող էի: Ամառային արձակուրդներին հայրենի քաղաքումն էի՝ էջմիածնում: Ձեր մտերիմ և հավատարիմ ընկեր մեծ բանաստեղծ Ե. Չարենցի, պրոֆեսոր Հայկ Գյուլիքեխյանի և էլի երկու գրողների հետ եկել էիք էջմիածին գրական կյանքին ծանոթանալու և գրասերների միություն կազմակերպելու: Հավաքվեցին տպարանի բանվորները, ուսանող երիտասարդները, բարձր դասարանի աշակերտները: Զրույցը, որը վարում էր Ե. Չարենցը, վերաբերում էր նոր կազմակերպվող Սովետական գրականության հարցերին: Ինձ հանձնարարեցիք գրական խմբակ կազմակերպել (ես

մասնակցում էի համալսարանի գրական խմբակին): Ձեր հանձնարարությունը կատարեցինք և ունեցանք մի քանի պարապմունք:

1934-35 ուսումնական տարում ես ուսուցիչ էի Էջմիածին քաղաքի նո. 1 միջնակարգ դպրոցում, որը տեղավորված էր նախկին Գևորգյան ճեմարանի շենքում, ուր տարիներ առաջ սովորել էիք նաև Դուք: Հաճախ տեսնում էի Ձեզ մատենադարան գնալիս կամ հենց մատենադարանում՝ խորասուզված հին ձեռագրերի մեջ, ուր որոնում և ուսումնասիրում էիք Վարդան Այգեկցու առակները, որոնք հետագայում լույս տեսան աշխարհաբար՝ «Աղվեսագիրք» վերնագրով: Ձեզ սիրահոժար ընդառաջում էր Ձեր նախկին ուսուցիչ Սենեքրիմ Տեր-Հակոբյանը: Նա էլ ունեցավ Ձեր դաժան ճակատագիրը:

Եկան մրրկաշունչ և հոգեմաշ տարիներ ու պատերազմ: Հուդայի թոռները ժամանակավոր հրձվանք ապրեցին: Բայց պատմության արդար ձայնն ուժեղ և հզոր հնչեց կուսակցության 20-22-րդ համագումարներում: Վերականգնվեց ոտնակոխ եղած արդարությունը և անմեղ զոհերը վեր հառնեցին իրենց անհայտ ու անանուն շիրիմներից: «Մարգարիտները ցեխի մեջ չեն քայքայվում» (Վ. Հյուգո):

Վեր բարձրացաք Դուք և Ձեր բախտն ունեցող բոլոր զրպարտված անմեղները: Հրատարակվեցին և վերահրատարակվեցին Ձեր սքանչելի ստեղծագործությունները:

1956 թվից հայ գրական մեծերի հետ Ձեզ էլ եմ դասարան տարել և իմ սաների զգայուն հոգիներին հաղորդակից դարձրել Ձեր շենշող ստեղծագործությունների կախարդական հմայքը:

Ձեր անմահ ստեղծագործություններից և սքանչելի թարգմանություններից, որոնք հրատարակվել էին Ձեր կենդանության օրոք, պահել էի մեծ դժվարությամբ, բայց խորունկ հավատով: «Աբովյանի անհայտ բացակայությունը», «Տարաս Բուլբա», «Գյուլիվերի ճանապարհորդությունը» և այլն, սիրով նվիրեցի հայրենի Գորիսում Ձեր տուն-թանգարանին, որտեղ ապրում է Ձեր տաք շնչառությունը» [Նույն տեղում]:

Այս փոքրիկ, սակայն նշանակալի դրվագները՝ Բակունցի այցելությունները Էջմիածին, Չարենցի հետ գրասերների միություն ստեղծելու նախաձեռնությունը, մատենադարանում աշխատելը, Սենեքրիմ Տեր-Հակոբյանի հետ շփումները, ով նրան սիրահոժար ընդառաջում էր որպես Գևորգյան ճեմարանի իր նախկին սանի, բացահայտում են նրա կենսագրության ուշագրավ նոր կողմերը:

Այնուհետև Դանդյանը պատմում է, թե ինչպես է 1972 թվականին ծանոթացել Բակունցի որդու՝ Սևադայի հետ, որ արդեն գիտական համբավ ուներ:

Իր սրտագրավ հուշագրությունը Դանդյանը ամփոփում է այսպես.

«Բտալական վերածննդի մեծ բանաստեղծ Պետրարկայի (1304-1374) գերեզմանին գրված է. «Ինձ որոնեք ապրողների մեջ»: Այս խոսքերը անմնացորդ վերաբերվում են Ձեզ, խոսքի մեծ վարպետ՝ Ակսել Բակունց: Դուք կաք և մնում եք հայ բազմադարյա գրականության՝ Մաշտոցից մինչև Պարույր Սևակ ձգվող ոսկե շղթայի փայլուն օղակներից մեկը: Դուք հավերժ կապրեք վերածնված Հայաստանում և հայ ժողովրդի սրտում:

Իսկ Ձեզ գրադարտողների, բանասերկու գրչակների անարժան գերեզմանները թող ծածկվեն փշով, տատասկով, թքով, ամոթով, նախատինքով ու հավիտենական անեծքով» [Նույն տեղում]:

*Հայկ Դանդյան /ստորագրություն/
ՀԱՅԿ. ՄՍՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՏԵՐԱՆ
Էջմիածին 1980 թ., հունիս*

Այժմ ներկայացնենք Հայկ Դանդյանի արժեքավոր նվիրատվությունները, որոնք այսօր մշտական տեղ ունեն Ակսել Բակունցի տուն-թանգարանի ցուցադրությունում: Դանդյանը 1976 թվականի մարտի 31-ին թանգարանի վարիչ Քաջիկ Միքայելյանին գրել է. *«Մեծ գրողի գրական ժառանգության այս մասունքները պահել եմ դժվարություններով՝ հավատալով արդարության հաղթանակին»*, ուստի դրանք թանգարանին հանձնում էր բացառիկ հոգածությամբ ու անկեղծ հարգանքով:

1. «Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայությունը»,

2. Ն. Գոգոլի «Տարաս Բուլբա» վեպի առանձին հրատարակությունը (1934 թ.), որի թարգմանիչը, խմբագիրը և առաջաբանի հեղինակն Ակսել Բակունցն է:

Դանդյանը սրտառույ խոսքով գրում է. *«Թող այս մասունքները հանգստանան նրա տուն-թանգարանում. նվիրում եմ սիրով և ակնածանքով՝ Հայկ Դանդյան»* [Նույն տեղում]:

Ավելի ուշ՝ 1979 թվականին, նա թանգարանին է նվիրել նաև Ջոնաթան Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունը», որի խմբագիրը և առաջաբանի հեղինակը նույնպես Ակսել Բակունցն է:

Բակունցի տուն-թանգարանի տնօրեն Քաջիկ Միքայելյանին 1977 թվականի օգոստոսի 9-ին հասցեագրած նամակում Դանդյանը գրում է. *«Թանգարանին, իբրև նվեր, ուղարկում եմ այս նյութերը»*.

1. «Սովետական գրականություն», N 5, 1957 թ.,

2. «Գրական թերթ», 1966 թ., 22 ապրիլի,

3. «Ես Բակունցի Մուրոն եմ», Ալեք Խաչունց, տպված «Ավանգարդ» թերթում:

Խնդրում եմ, փաթեթն ստանալուն պես պատասխանեք, որ տարակուսած չմնամ: Առաջիկայում կուղարկեմ Բակունցի թարգմանությամբ և առաջաբանով «Գուլիվերի ճանապարհորդությունը»: Բարեկամի զգացմունքներով՝ Հայկ Դանդյան, 9/VIII 77 թ., Էջմիածին» [Նույն տեղում]:

Այս նվերների արժեքը թանգարանի համար անգնահատելի է: Այն ոչ միայն արտացոլում է գրքերի պատմական արժեքը՝ լույս տեսած Բակունցի կենդանության օրոք, այլև վկայում է հրաշքով պահպանվելու՝ դրանց դժվարին ճանապարհը ռեպրեսիայի տարիներին, երբ շատ արժեքավոր նյութեր անհետացան կամ ոչնչացան: Այս բացառիկ գրքերը այսօր ոչ միայն ցուցանմուշներ են, այլև տուն-թանգարանի «շնչառությունն» են. դրանց էջերում ապրում է Բակունցի ստեղծագործական ոգին, նրա մտքի ճախրանքը և նվիրյալների հավատը:

«Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումը» (Երևան, Պետհրատ, 1932 թ.)՝ Բակունցի այս ուսումնասիրությունը (առաջին վեց գլուխները և յոթերորդի վերջին պարբերությունը) նախապես տպագրվել է «Նոր ուղի» հանդեսում (գիրք 2) 1932 թվականին, իսկ ամբողջությամբ և առանձին գրքով՝ Պետհրատի կողմից նույն թվականին (Ե., Պետհրատ, 1932 թ., 64 էջ)՝ 3000 տպաքանակով: Գրքի անվանաթերթին է՝ «Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայումը: Արխիվային նոր վավերագրերի և անհայտ նամակների հիման վրա գրեց Ակսել Բակունց: Պետական հրատարակություն, Երևան, 1932»: Գրքի շապիկի վրա փակցված է Աբովյանի նկարը (ցավոք, թանգարանում պահվող օրինակում նկարը պոկված է՝ Թ.Մ.), որը համապատասխանել է գրողի հայտնի միակ դիմանկարին՝ Լ. Տիգրանյանի ջանքերով Տփղիսում գործած լուսանկարիչ Բարկանովի արտահանած պատճենի: Ներքևում ընդգրկված է նաև ինքնագիրը՝ «Խաչատուր Ապովեան», որը վերցված է դորպատյան տարիների ձեռագրերից: Հետագայում աշխատությունն արտատպվել է «Ա. Բակունց, Գրականության մասին» (1959 թ.) գրքում, որտեղ կրճատված են Ե, Զ գլուխները և է գլխի որոշ հատվածներ: Երկու հատորով երկերում ուսումնասիրությունը նույնպես կրճատված է հրատարակվել, և միայն Բակունցի ակադեմիական քառահատորյակը արտատպել է սույն՝ առանձին հրատարակության բնագիրը:

Նիկոլայ Գոգոլի «Տարաս Բուլբա» (Երևան, Պետհրատ, 1934 թ.)՝ Դանդանը գրքի վրա թողել է ընծայագիր՝ «Նվիրում եմ Ակսել Բակունցի տուն-թանգարանին: Հայկ Դանդան: Հայկական ՍՍՀ վաստակավոր ուսուցիչ: Էջմիածին-Գորիս, 31.3.76 թ.» [Ակսել Բակունցի տուն թանգարանի հիմնական ֆոնդ]:

Գոգոլի «Տարաս Բուլբա» հայերեն այս հրատարակության թարգմանիչը և առաջաբանի հեղինակը Ակսել Բակունցն է: Գիրքը հանձնվել է տպագրության՝ 26 հունվարի 1934 թ., ստորագրվել է տպագրության՝ 22 մարտի, 1934 թ.: Ամենայն հավանականությամբ Բակունցը «Տարաս Բուլբա»-ի թարգմանությունը կատարել է 1933 թվականին, և առաջաբանն էլ այդ նույն թվականին է գրված: Առաջաբանը որոշ կրճատումներով տպագրվել է «Ակսել Բակունց, Գրականության մասին» (1959 թ.) գրքում, նույնը նաև՝ Երկերի ժողովածուի երկհատորյակում: Ակադեմիական քառահատորում այն հրապարակվել է՝ ըստ 1934 թվականի սույն առանձին հրատարակության: Գոգոլի «Տարաս Բուլբա»-ի թարգմանությունն ու Բակունցի հեղինակած առաջաբանը ժամանակին բարձր գնահատվել են, թեև եղան առանձին բացասական, կամայական արձագանքներ: Ավելի վաղ «Տարաս Բուլբա»-ն թարգմանել է Մանուկ Աբեղյանը, տպագրվել է Թիֆլիսում, 1892 թվականին: Բակունցի հոգվածը վերաբերում է ոչ միայն մեծանուն գրող Գոգոլի հանրահայտ պոեմին, ոչ միայն հայ-ռուսական գրական կապերին, այլ նաև համաշխարհային մշակույթին հուզող հիմնախնդիրներին՝ իրենց նշանակությամբ միշտ թարմ ու ուսուցանող: Ռուսական և հայկական գոգոլագիտության մեջ ոչ ոք այնպես խորքային, համոզիչ վերլուծության ու արժևորման չի ենթարկել «Տարաս Բուլբա»-ն, ինչպես Բակունցը: Թարգմանությանը Բակունցը կցել է նաև «Բառարան», որն աչքի է ընկնում կոզակական միջավայրին ու կենցաղին բնորոշ

հասկացությունների՝ հայերեն համապատասխանությունների ճշգրիտ բացատրություններով:

Ջոնաթան Սվիֆտի «Գուլիվերի ճանապարհորդությունները» (Երևան, Պետհրատ, 1934 թ.)՝ այս բացառիկ հրատարակությունը նույնպես թանգարանում ցուցադրվում է Հայկ Դանդյանի ջանքերով: Այն թարգմանել է մոսկվաբնակ գրող, գրական գործիչ Կարեն Միքայելյանը, խմբագիրը և առաջաբանի հեղինակը Ակսել Բակունցն է, անվանաթերթը և նախաթերթը նկարագարող է Հակոբ Կոջոյանը, պատասխանատու խմբագիրն է Եղիշե Չարենցը, որը այդ ժամանակ Հայպետհրատի գեղարվեստական բաժնի վարիչն էր և նախաձեռնեց Ջ. Սվիֆտի գիրքը հրատարակելու գաղափարը՝ վստահելով Բակունցին խմբագրել և առաջաբան գրել: Սվիֆտի այս ստեղծագործության հայերեն առաջին լրիվ հրատարակությունը հայ գրական կյանքում բացառիկ երևույթ էր, ջերմորեն ընդունվեց ընթերցողների կողմից (թեև բնական է, եղան նաև ընդդիմախոսներ):

Թարգմանիչ Կարեն Միքայելյանը անհատի պաշտամունքի տարիներին բռնադատված մտավորականներից է: Նրա ստեղծագործությունները գրեթե չեն ուսումնասիրվել, իսկ մեծ մասը՝ քաղաքական հալածանքների հետևանքով, կորել է կամ ոչնչացվել: Արդարացումից հետո միայն մասամբ վերականգնվել է նրա ժառանգությունը, և 1961-ին Երևանում տպագրվել է «Կեցցեն հաղթվածները» պատմվածքների ժողովածուն:

Բակունցի գնդակահարությունից հետո, երբ նրա հետքերը ամենուր ջնջվում էին, Ջոնաթան Սվիֆտի «Գուլիվերի ճանապարհորդությունները» գիրքը սրբությամբ պահպանելը վկայում է Դանդյանի մեծ նվիրումի մասին: Թանգարանի վարիչին 12.VI.79 թ. հասցեագրած նամակում Դանդյանը գրում է. *«Ուղարկում եմ Բակունցի թարգմանությամբ և առաջաբանով՝ «Գուլիվերի ճանապարհորդությունները»: Այդ գիրքը ծանր ճակատագիր է ունեցել. ինչպես կտեսնեք, պոկված է տիտղոսաթերթը, Բակունցի անունը քիմիական մատիտով ջնջված է: Այդ վիճակում 1937 թ. ես վերցրել եմ մեկից, ով ուզում էր այրել: Գրքի այդ վիճակն էլ խոսում է այն ծանր օրերի ահ ու սարսափի մասին»* [Ակսել Բակունցի տուն թանգարանի գիտաօժանդակ ֆոնդ]:

Գիրքը ունի նաև ընծայագիր՝ *«Այս տանջված ու հոգնած գիրքը թող հանգստանա նրա տաղանդավոր թարգմանիչ և ծավալուն առաջաբանի հեղինակ մեծանուն գրող Ակսել Բակունցի տուն-թանգարանում: Միտքով նվիրում եմ Բակունցի 80-ամյակի առթիվ. Հայկ Դանդյան: Հայկական ՄՍՀ վաստակավոր ուսուցիչ: 13 հունիսի 1979 թ. Էջմիածին-Գորիս»:*

Ինչպես վկայում է նվիրատուն, գիրքը փրկելու համար անհնարին քայլեր են ձեռնարկվել՝ պոկվել է անվանաթերթը, որը գեղարվեստորեն ձևավորված էր Կոջոյանի կողմից, վերնագրից հետո նշված՝ «Թարգմ. Կարեն Միքայելյան, խմբ. Ակսել Բակունց»: Գիրքի առաջաբանի բոլոր էջերի վերևի հատվածից, հասկանալի պատճառներով, *ջնջվել է Բակունցի անունը*: Միայն այդ կերպ հնարավոր եղավ այդ դժնդակ տարիներին պահպանել Բակունցի հետ առնչվող այս բացառիկ ստեղծագործությունը, և դրա համար մենք պարտական ենք Հայկ Դանդյանի վճռական նվիրումին:

Ինչպես նշեցինք, Դանդյանի նվիրումը Բակունցին և նրա սրբազան տուն-թանգարանին չի սահմանափակվել միայն բացառիկ հրատարակությունների

նվիրատվությամբ: Նա պարբերաբար ուղարկել է գրողի կյանքին ու գործին առնչվող տարբեր նյութեր, մամուլի կարևոր հրապարակումներ՝ թանգարանի արխիվում պահպանության համար:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև Դանդյանի 27.07.1976 թ. նամակը՝ հասցեագրված թանգարանի տնօրեն Քաջիկ Միքայելյանին. *«Շատ հարգելի Քաջիկ Միքայելյան: Բակունցի տուն-թանգարանին եմ ուղարկում այս թերթը՝ «Սովետական Հայաստան» 1949թ. սեպտեմբերի 23 N 226/8375/: Թերթը նվիրված է Խ.Աբովյանի մահվան 100-ամյակին: Չգիտեմ, դուք Վալերի Կիրպոտինին գիտե՞ք արդյոք: Թերթի 4-րդ էջի նկարը՝ մեջտեղի կանգնածը: Նա 1937 թ. ապրիլին Հայաստանի գրողների պլենումում ելույթ ունեցավ, որը տպվեց «Խորհրդային Հայաստան» թերթում (23 ապրիլի, 1937 թ.): Հոդվածը շաղախված է ամենամահաբեր թույնով՝ հատկապես Բակունցի և Չարենցի մասին: Մեծ սպառնալիքներ՝ Իսահակյանի հասցեին: Այդ հոդվածի բնագիրն ինձ մոտ է: Պիտի բազմացնեմ և մեկական օրինակ ուղարկեմ Իսահակյանի, Չարենցի և Ձեր տուն-թանգարաններին: Իսկ Զվյագինցևան՝ հայ ժողովրդի մեծ բարեկամն է ու պոեզիայի ջերմ երկրպագու և թարգմանիչ: Ես էլի նյութեր կուղարկեմ Ձեզ՝ Բակունցին վերաբերող: Կիրպոտինի նկարը պահեք որպես անեծքի և դատապարտության նշան... Լավագույն ցանկություններով՝ Հայկ Դանդյան /ստորագրություն/, 27.07.1976 թ., Էջմիածին» [Նույն տեղում]:*

Թանգարանին հասցեագրված մեկ ուրիշ նամակում Դանդյանը հավելում է. *«Ուղարկածս քաղվածքներից ինչպես տեսաք, թույն է կաթում: Սրիկա զրպարտիչները ազնիվ մարդկանց կորցնելուց հետո գրադարաններից էլ վերացրել են նման նյութերը, որ իրենց սև հետքը կորի: Թեկուզ չցուցադրեք, բայց լավ պահեք այդ քաղվածքները, և հավատացեք, կգա ժամանակ՝ դրանց մասին կգրվի բացեիքաց...» (12.VI.79 թ.)* Նույն տեղում]:

Թանգարանում Բակունցին նվիրված հիշատակի օրվան մասնակցելու հրավերին ի պատասխան՝ Դանդյանը գրում է. *«Շնորհակալություն հրավերի համար: Անկեղծ ասած, հուլիսի 5-ը ինձ համար երջանիկ օր կլինեք, եթե կարողանայի ներկա լինել հանդեսին: Համոզված եղեք, որ մտքով Գորիսում կլինեմ, դա միայն Բակունցի մեծարման տոն չէ, դա նաև վերականգնված արդարության տոն է»* [Նույն տեղում]:

Էջմիածնի Խաչատուր Աբովյանի անվան դպրոցը այսօր էլ առանձնակի սիրով է մեծարում իր պատմության էջերը փառազարդած վաստակավոր ուսուցչին՝ Հայկ Դանդյանին: Դպրոցում գործում է նրա անունը կրող դասասենյակ, որտեղ տեղադրված է մանկավարժության նվիրյալի կիսանդրին, ներկայացված են կյանքի ու գործունեության ուշագրավ դրվագներ: Պարբերաբար կազմակերպվում են մեծարման ցերեկույթներ, և նրա լուսավոր կյանքի օրինակը հասնում է նոր սերունդներին:

«Չարանենգ բանասարկուների հախուռն քրքիջի տակ ու նրանց ձեռքով զոհ գնաց Ակսել Բակունցը: Մեծ նահատակ, քեզ հազար փառք...» [Նույն տեղում]:

– այսպես վկայում է Հայկ Դանդյանի սրտի խոսքը, որն այսօր շարունակում է մնալ Բակունցի տուն-թանգարանի վառ ուղենիշը:

Եզրակացություն

Վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայկ Դանդանի նվիրումը միայն նյութական արժեքների փոխանցում չէր. այն արժեքների փրկություն էր՝ ժամանակի, քաղաքական հետապնդումների ու մշակութային ոչնչացման վտանգի դեմ: Դանդանի գործունեությունը հաստատում է մի կարևոր ճշմարտություն՝ թանգարանները գոյատևում են ոչ միայն պետական կառույցների, այլև առաջին հերթին՝ անհատ նվիրյալների շնորհիվ, ովքեր իրենց վստահված ժառանգությունը պահպանում են որպես հոգևոր պարտք:

Ակսել Բակունցի տուն-թանգարանը ոչ միայն գրողի ստեղծագործական ժառանգության պահպանման ու ցուցադրման վայրն է, այլև նվիրվածության, հոգատարության ու մշակութային հիշողության կենդանի խորհրդանիշը:

Այսպիսով՝ ուսումնասիրությունը ընդգծում է, որ Բակունցի տուն-թանգարանը ձևավորվել է հավատարմության ու նվիրվածության ուժով, իսկ Դանդանի ընծաները դարձել են դրա կենդանի շնչառությունը՝ օրինաչափորեն միաձուլելով անցյալն ու ներկան, գրականությունը և մարդկային ազնվությունը:

SUMMARY

This study examines the role of Hayk Danghyan in the formation and preservation of the Aksel Bakunts House-Museum, offering a scholarly interpretation of his exceptional dedication. The aim of the article is to demonstrate how the steadfast commitment of an individual becomes a driving force in safeguarding cultural heritage, and how Danghyan's literary and documentary donations have become integral elements of the museum—the living “memory” of the writer. Drawing on archival documents, Danghyan's handwritten materials, museum correspondence, and rare editions, the article reconstructs the history of how these works were preserved during the repressive 1930s–40s, and highlights their significance for the study of Bakunts's biography, literary activity, and for the development of museum studies.

The objectives of the study are to:

Reconstruct the historical, literary, and personal connections between Hayk Danghyan and Aksel Bakunts.

Present the preservation history of the rare editions donated by Danghyan to the museum, using archival evidence.

Analyze how an individual's personal initiative can become a decisive factor in the protection of literary heritage.

Reveal the mechanisms through which cultural values survived during the years of political repression and cultural erasure.

Assess the role of devoted individuals as carriers and guardians of heritage in the formation of the Bakunts House-Museum.

Methodology: The research employs archival analysis, comparative study of textual sources, chronological reconstruction, museum-studies perspective, and cultural memory theory. Danghyan's letters, dedications, press materials, and the documented histories of these editions serve as primary sources.

Conclusion: The analysis demonstrates that Hayk Danghyan's contribution was not merely the transfer of material items; it was an act of preservation against the pressures of time, political persecution, and cultural destruction. Thanks to his dedication, Bakunts's creative spirit survived not only in the texts but also as an exemplar of cultural resilience. Danghyan's work affirms a fundamental truth: museums endure not only through institutional structures but above all through devoted individuals, who safeguard inherited values as a moral responsibility.

Thus, the study underscores that the Aksel Bakunts House-Museum was built through loyalty and memory, and that Danghyan's donations have become its living essence—harmoniously linking past and present, literature and human integrity.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ակսել Բակունցի տուն-թանգարանի գիտաօժանդակ ֆոնդեր:
2. Ակսել Բակունցի տուն-թանգարանի հիմնական ֆոնդեր:

ՄԻՆԱՍՅԱՆ ԹԱՄԱՐԱ

«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտ

ԻՍԱՀԱԿ ՄԱԿՎԵՅՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Իսահակ վարդապետ Մակվեցի, Հռոմի Հավատասփյուռի Ժողով, Ուրբանյան վարժարան, Փիլիպպոս Մակվեցի, նամակագրություն, աղերսագիր, Սարգիս Կաֆայեցի:

Keywords: Isaak Vardapet Makvetzi, Congregation for the Propagation of the Faith, Urban College, Philippus Makvetzi, correspondence, supplicatory letter, Sargis Kafayetsi.

Իսահակ Մակվեցին ԺԷ դարի հայ եկեղեցու պատմության նշանավոր, սակայն քիչ ուսումնասիրված գործիչներից է [Կ. եպս. Ամատունի, 1989, 81-84; Հախնազարյան, 2012, 90-91]: Նրա գործունեության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Արտագի գավառի Ս. Թադեի վանքում գրված ձեռագրերի հիշատակարաններում, ինչպես նաև Հռոմի Հավատասփյուռի Ժողովին, Ուրբանյան վարժարանի ղեկավարությանը և Եվրոպայի հայ վաճառականներին ուղղված նրա նամակներում: Այս աղբյուրներում Իսահակ Մակվեցին հանդես է գալիս որպես հոգևոր առաջնորդ, կրթական նախաձեռնությունների հովանավոր և հմուտ դիվանագետ, իսկ ձեռագրերում՝ որպես գրիչ և պատվիրատու: Նրա նամակները, որոնք պահպանվում են Վատիկանի Առաքելական արխիվում՝ հայերեն բնագրերով և լատիներեն թարգմանությամբ (Archivio della Propaganda Fide, Series SC, v.2–v.4, AP. Udienze 1680–1690, V.2, p. 64), ինչպես նաև Վենետիկի մատենադարանի թ. 1458 ձեռագրում [Սարգիսեան, 1924, հ. Բ, 1241-1245], գիտական շրջանառության մեջ է դրել Կարապետ եպիսկոպոս Ամատունին՝ հրապարակելով դրանք որպես հավելված իր 1983 թվականի հոդվածի [Կ. եպս. Ամատունի, 1983, 113-130]: Իսահակ Մակվեցու ձեռագրական ժառանգությունը կղիտարկվի առանձին ուսումնասիրության շրջանակում, իսկ ներկա վերլուծությունը հիմնված է նրա նամակագրության վրա:

ԺԷ դարի երկրորդ կեսը հայ հոգևոր և մշակութային կյանքի համար բեկումնային փուլ էր՝ պայմանավորված աշխարհաքաղաքական վերափոխումներով և ներեկեղեցական հակամարտություններով: Այս բարդ ժամանակաշրջանում է հանդես գալիս Վասպուրականի Արտագ գավառի Ս. Թադեոս առաքյալի վանքի առաջնորդ Իսահակ Մակվեցին որպես աստվածաբան, եկեղեցական կազմակերպիչ և դիվանագետ: Իր բարեպաշտ վարքով և բազմակողմանի գործունեությամբ Իսահակ Մակվեցին վաստակել էր «Իսահակ (Սահակ) Արդար» անունը, որը ժամանակակիցներն օգտագործում էին՝ ընդգծելու նրա հոգևոր հեղինակությունը. «Տեր Իսահակ Մակուեցի մեծ եւ տիեզերալույս վարդապետ՝ կոչեցեալն Արդար ըստ վարուց եւ ըստ

կենցաղավարութեան» [Մ. վրդ. Քէշիշեան, 1964, 615]: Ժողովուրդը նրան ճանաչում էր որպէս խստապահանջ և լուսավոր վարդապետ, որի կենցաղավարությունը սերունդների համար օրինակ էր դարձել:

Իսահակ Մակվեցու գործունեության ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն նրա կերպարի բացահայտման, այլև ԺԷ դարի հայ եկեղեցու ներքին ճգնաժամերի և արտաքին ազդեցությունների վերլուծության տեսանկյունից:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածը հիմնված է Իսահակ Մակվեցու արխիվային նամակագրության բովանդակային վերլուծության վրա: Կիրառվել են համադրական, պատմագիտական և վերլուծական մեթոդներ: Նամակները դասակարգվել են ըստ թեմատիկ ուղղությունների, որոնք արտահայտում են նրա գործունեության հիմնական ոլորտները՝ կրթական և հովվական առաքելություն, միջեկեղեցական դիվանագիտություն, եկեղեցաշինական նախաձեռնություններ: Այս դասակարգումը հնարավորություն է տալիս դիտարկել Մակվեցու նամակագրությունը ոչ միայն որպէս փաստագրական աղբյուր, այլև որպէս գաղափարական և հոգևոր գործունեության արտահայտություն:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Իսահակ Մակվեցու նամակագրությունը՝ ուղղված Հռոմի Հավատասփյուռի Ժողովին, Ուրբանյան վարժարանի ղեկավարությանը և Եվրոպայի հայ վաճառականներին, արժեքավոր աղբյուր է ԺԷ դարի հայ եկեղեցու հոգևոր, կրթական և դիվանագիտական գործունեության ուսումնասիրության համար: 1681–1700 թվականներին վերաբերող այս նամակները լուսաբանում են Մակվեցու բազմաբնույթ գործունեությունը՝ ներառյալ Հայ Առաքելական եկեղեցու և Հռոմի Սուրբ Աթոռի միջև հաստատված կապերը, ներեկեղեցական խնդիրները, ինչպէս նաև նրա ջանքերը՝ ուղղված իր սան Փիլիպպոս Մակվեցու կրթության ապահովմանը, հոգևոր դաստիարակությանը, ազգային ինքնության պահպանմանը և արտաքին հարաբերությունների կայացմանը: Այս նամակագրությունը բացահայտում է ոչ միայն հոգևորականների անձնական կապերը, այլև հայ եկեղեցու դիրքորոշումը միջազգային կրթական և ծիսական միջավայրում:

ԺԷ դարի երկրորդ կեսը Հայ Առաքելական եկեղեցու պատմության մեջ նշանավորվում է դավանաբանական, քաղաքական և վարչական լուրջ ճգնաժամերով: Հռոմի կաթոլիկ եկեղեցին, ձգտելով ամրապնդել իր ազդեցությունը արևելյան քրիստոնեական համայնքներում, ակտիվորեն ներգրավվում էր Հայ եկեղեցու ներքին գործերին: Այդ միջամտության կարևոր վկայություններից է 1681 թվականի Հավատասփյուռի Ժողովի կողմից Հռոմի Պապ Իննովկենտիոս ԺԱ-ին ուղղված brevis կոչվող աղերսագիրը, որով փորձ էր արվում համոզել Իսահակ Մակվեցուն՝ ընդունել Ամենայն Հայոց կաթողիկոսի պաշտոնը:

Իսահակ եպիսկոպոսը ներկայացվում է որպես բարձր կրթությամբ, բարոյապես անբասիր, ազդեցիկ և հարգված հոգևորական: Նրա գործունեությունը կենտրոնացած էր Պարսկահայքի թեմերում, մասնավորապես Արտազի Ս. Թադեոսի վանքում, որտեղ նա նաև վանահայր էր: Հակոբ Դ Ջուղայեցու կողմից նա ձեռնադրվել էր եպիսկոպոս և նշանակվել Ս. Էջմիածնի աթոռի տեղապահ՝ վերջինիս Երուսաղեմ մեկնելուց առաջ. «Կաթողիկոսն Յակոբ բերեալ զձեռնասուն աշակերտն իւր Իսահակ վարդապետ Մակուեցի, արար եպիսկոպոս, եւ եղ ի տեղի իւր աթոռակալ եւ տեղապահ. եւ ինքն ելեալ գնաց ի սուրբ Երուսաղեմ» [Զաքարիայ սարկաւազ, հ. Բ, 1870, 71-72; Մ. արք. Օրմանյան, հ. Բ, 2974]:

Իսահակ Մակուեցին ճանաչված էր ինչպես հայոց միջավայրում, այնպես էլ եվրոպական եկեղեցական և քաղաքական շրջանակներում: Նրա նամակները գրված են բարձր գրական ոճով, հագեցած աստվածաբանական և հայրաբանական տերմիններով: Իսահակ Մակուեցին հանդես էր գալիս էկումենիկ դիրքորոշմամբ՝ Հռոմի եկեղեցին բնորոշելով որպես «սյուն հաւատոյ», «լոյս աշխարհի» և «ճշմարտութեան ջահ»՝ միաժամանակ պահպանելով Հայ Առաքելական Եկեղեցու դավանաբանական ինքնությունը:

1681 թվականի մայիսի 26-ին Հավատաստիյուռի ժողովը դիմել է Հռոմի Պապ Իննովկենտիոս ԺԱ-ին՝ *brevis* ուղարկելու Իսահակ Մակվեցուն՝ հորդորելով նրան չհրաժարվել Սուրբ Էջմիածնի Աթոռի հաջորդի կոչումից: Աղերսագիրը, որը պահվում է Վատիկանի Առաքելական արխիվում (AP. Udienze 1680–1690, V.2, p. 64), գրված է գրական իտալերենով և պաշտոնական դիվանագիտական ոճով: Փաստաթղթում Իսահակը ներկայացվում է որպես «*persona potente e stimata*»՝ ազդեցիկ և հարգված անձ, որի միջոցով հնարավոր է «*la totale riduzione di quella nazione al Catholichismo*»՝ հայ ազգի ամբողջական միավորումը կաթոլիկության հետ: Երուսաղեմի Պատրիարքը նույնպես իր աջակցությունը կապել էր Իսահակի հաստատման հետ՝ հայտարարելով, որ միայն այդ դեպքում պատրաստ է ճանաչել նոր կաթողիկոսին, իսկ այլընտրանքային ընտրության դեպքում պատրաստ է ընդդիմանալ:

Brevis-ը դիտարկվում էր որպես լեգիտիմացման և ազդեցության գործիք, որի միջոցով Հռոմը փորձում էր ամրապնդել իր դիրքերը արևելյան քրիստոնեության շրջանակում: Հավատաստիյուռի ժողովի նախաձեռնությունը վկայում է, որ Հայ եկեղեցին ընկալվում էր որպես դիվանագիտական կամուրջ արևելքի և արևմուտքի միջև: Սա նաև ցույց է տալիս, որ Հայ եկեղեցու որոշ շրջանակներ պատրաստ էին ընդունել Հռոմի հեղինակությունը՝ հանուն քաղաքական կամ հոգևոր շահերի:

Հռոմի միջամտության քաղաքականությունը առավել հստակ արտահայտվեց 1698 թվականին, երբ Պապ Իննովկենտիոս ԺԲ-ը կատարեց խորհրդանշական պարզևատրումներ՝ ուղղված Հայ եկեղեցու առաջնորդներին: Այդ արարողության ընթացքում Նահապետ Ա Եդեսացի (1691–1705) կաթողիկոսին ընծայվեց ոսկեզօծ գահ, Իսահակ Մակուեցուն՝ թագ, իսկ Սարգիս Կաֆացի եպիսկոպոսին՝ ուրար (պատվիանշան) [Կ. եպս. Ամատունի, 1983, 116]: Այս պարգևները կրում էին ոչ միայն հոգևոր, այլ նաև քաղաքական նշանակություն: Գահը հաստատում էր Նահապետի՝

որպես օրինական կաթողիկոսի ճանաչումը, իսկ Իսահակի թագը խորհրդանշում էր նրա՝ որպես համաքրիստոնեական միության գործչի դերը: Հռոմը Իսահակին դիտարկում էր որպես միավորող կամուրջ արևելյան եկեղեցիների և կաթոլիկ աշխարհի միջև:

Իսահակի՝ Հռոմի հետ ունեցած կապերը առաջացնում էին զգալի դիմադրություն Ս. Էջմիածնի ավանդապաշտ շրջանակներում: 1682 թվականին նրա դեմ դատ է սկսվում Ս. Էջմիածնում Ամենայն Հայոց կաթողիկոս Եղիազար Ա Այնթափցու (1681-1691) նախագահությամբ: Իսահակ Մակվեցին մեղադրվում էր ուղղափառության դավանությունն ունենալու մեջ, ինչը ընկալվում էր որպես կաթոլիկ միաբանության կողմնորոշում: Դատական պատիժ է սահմանվում մորուսի կտրումը՝ որպես խորհրդանշական խայտառակություն [Լեհացի, 1964, 186]:

Չնայած դատական գործընթացին՝ նույն թվականին Իսահակ Մակուեցին ընդունում է կաթոլիկ միաբանություն՝ առանց դավանափոխության: Նրա դավանագիրը Վարդան եպիսկոպոս Հունանյանի միջնորդությամբ ուղարկվում է Հռոմի Պապին [Ոսկեան, 1941, 50]: Այս մասին Վարդան եպիսկոպոս Հունանյանը Եվդոկիայի (Թոքատ) համաքաղաքացիներին ուղղված «Թուղթ Քաջալերական»-ում գրում է. «Իսահակ վրդ. Մակուեցի, աշակերտ Յակոբայ Կաթողիկոսի, առաջին Արքեպիսկոպոս Մեծին Հայաստանի յԱրտագ գաւառի, ուր է դամբարան Սրբոյ Առաքելոյն Թադէի, այր առաքինասէր եւ գիտնական, ի ձեռն իմ արար զդաւանութիւն Եկեղեցւոյն Հռոմայ, ի վանս Բագրեւանդայ, որ յափն Եփրատայ, յամի Տեառն ՌՈԶԲ-ին (1682), մինչ շրջէի քարոզութեամբ ի Հայաստան, եւ գնոյն յղեաց առ Ինովչենցիոս Փափն ԺԱ-ներորդ» [Կ. եպս. Ամատունի, 1983, 111]: Սա վկայում է Իսահակի՝ համաքրիստոնեական միության տեսլականի և Հռոմի Սուրբ Աթոռի նկատմամբ հարգանքի մասին՝ առանց Հայոց եկեղեցու դավանաբանական ինքնության զոհաբերման:

Իսահակի ընտրությանը խոչընդոտող գործոններից էր նաև Եղիազար Ա Այնթափցու ինքնահռչակ կաթողիկոսությունը: Վերջինս, որ նախկինում զբաղեցրել էր Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքական պաշտոնները, 1664 թվականին Հալեպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցում հրավիրում է եկեղեցական ժողով և ինքնահռչակվում է որպես կաթողիկոս [Ս. արք. Օրմանյան, 2001, 589]: Նա Երուսաղեմում հիմնում է «Էջմիածին» մատուռը՝ որպես նոր աթոռի խորհրդանիշ [Ութուջյան, 2008, 79]:

Եղիազարի այս նախաձեռնությունը լուրջ սպառնալիք էր Ս. Էջմիածնի գերիշխանությանը: Հակոբ Դ Ջուղայեցին (1655-1680), որը հայտնի էր իր քաղաքական հեռատեսությամբ, դիվանագիտական ճկունությամբ և եկեղեցական համակարգի պահպանման վճռականությամբ, դիմում է Օսմանյան սուլթանին՝ ստանալու պաշտոնական հրովարտակ (խաթի շարիֆ), որով վերահաստատվում է Ս. Էջմիածնի գերիշխանությունը. «...բազում հակառակութիւն կրեաց յապստամբաց Սուրբ Էջմիածնի, յորոց մի էր Եղիազար ոմն, որ ինքնագլուխ կաթողիկոս նստաւ եւ եհատ զՀռոմոնց երկիրն ի Սուրբ Էջմիածնայ: Իսկ մեծ հայրապետն Յակոբ կրկին մտանելով առ սուլթանն Հռոմոնց, եւ վերստին հաստատեաց զՀռոմաստուն Սուրբ Էջմիածնի՝ թագաւորական խաթի շարիֆով» (ՄՄ 808, թ. 489 ք):

1681 թվականի ադերսագիրը և Իսահակ Մակունցու կերպարը բացահայտում են ԺԷ դարի եկեղեցական դիվանագիտության բարդ կառուցվածքը: Իսահակը հանդես է գալիս որպես միավորող գործիչ Հռոմի և Հայ եկեղեցու միջև, սակայն ներեկեղեցական դիմադրությունը, քաղաքական բարդությունները և դավանաբանական զգուշավորությունը խոչընդոտում են նրա ընտրությանը:

Իսահակ վարդապետ Մակունցու՝ Հռոմի Սուրբ Աթոռի հետ կապ հաստատելու շարժառիթները բազմաշերտ էին՝ պայմանավորված հոգևոր, կրթական և եկեղեցական միաբանության տեսլականով: Դա հատկապես ակնառու է Ուրբանյան վարժարանի ընտրության մեջ:

Հռոմի Սուրբ Աթոռի կողմից 1627 թվականին հիմնված Ուրբանյան վարժարանը (Pontificium Collegium Urbanum de Propaganda Fide) ստեղծվել էր որպես միսիոներական կրթական կենտրոն՝ նպատակ ունենալով պատրաստել հոգևորականներ ոչ միայն Եվրոպայի, այլև Արևելքի և այլ տարածաշրջանների համար: Վարժարանը կարևոր դեր էր խաղում Հռոմի և Արևելյան եկեղեցիների միջև հարաբերությունների ձևավորման և ամրապնդման գործում՝ առաջարկելով բազմալեզու և բազմամշակութային ուսուցում, ներառյալ աստվածաբանություն, փիլիսոփայություն, լեզուներ և միսիոներական պատրաստություն: Այս համատեքստում Իսահակ Մակվեցին Ուրբանյան վարժարանը դիտարկում էր ոչ թե որպես օտարացման միջոց, այլ որպես ազգային և դավանաբանական զարգացման հարթակ: Փիլիպպոս Մակվեցուն Հռոմ ուղարկելով՝ Իսահակը նպատակ ուներ նրան պատրաստել որպես կրթված, հավատարիմ և հեղինակավոր հոգևորական, որը կարող էր ծառայել հայ եկեղեցուն և պահպանել ազգային ինքնությունը:

1691–1697 թվականներին Իսահակ Մակվեցին մի շարք նամակներ է հղում վարժարանի ղեկավարությանը: Դրանցում նա մտահոգություն է հայտնում Փիլիպպոս Մակվեցու կրթության, դաստիարակության և ապագա հոգևոր ծառայության վերաբերյալ: Այս գործընթացը նա դիտարկում էր ոչ միայն անձնական, այլ նաև ազգային և եկեղեցական նշանակության հարց:

Այս հոգաձության առաջին վկայությունն է 1691 թվականի հունվարի 7-ին Ուրբանյան վարժարանի հայ ուսուցիչներ տեր Բասիլիոս Բարսեղին և Հովհաննես վարդապետին ուղղված նամակը, որտեղ Մակվեցին ներկայացնում է Փիլիպպոսին որպես «հոգեծին զաւակ» և «մխիթարութիւն սրտի»: Նա իր սանին ուղարկում է «համալսարան գերապանծ մօրն իմաստութեան»՝ ակնկալելով, որ ուսուցիչները հոգ կտանեն նրա կրթության և դաստիարակության մասին՝ «ի հոգեւոր եւ ի մարմնաւոր կարիս, եւ ի մտաւոր եւ ի բանական ուսմունս» (AP. SC. V.4, p. 190):

Նամակագրության հաջորդ կարևոր դրվագը 1694 թվականի հոկտեմբերի 11-ին Հռոմի Պապ Իննովկենտիոս ԺԲ-ին ուղղված դիմումն է, որը ստորագրել էին Իսահակ Մակվեցի և Սարգիս Կաֆայեցի եպիսկոպոսները: Նրանք ներկայացնում են Փիլիպպոս Մակվեցուն՝ խնդրելով ապահովել նրա բարեկեցիկ կրթությունը Ուրբանյան վարժարանում: Դիմումի տեքստում արտահայտվում է Իսահակ Մակվեցու խորը հոգաձությունն ու պատասխանատվության զգացումը իր սանի նկատմամբ, ինչպես նաև

ակնկալիք, որ կրթական հաստատությունը կշարունակի աջակցել նրան թե՛ նյութապես, թե՛ բարոյապես [Կ. եպս. Ամատունի, 1983, 115]:

1695 թվականի հոկտեմբերի 7-ին Իսահակ Մակվեցին և Սարգիս Կաֆայեցին նամակ են հղում Հռոմի Հավատասփյուռի կարդինալներին՝ կրկին ներկայացնելով Փիլիպպոս Մակվեցուն և խնդրելով, որպեսզի վերջինս շարունակի ուսանել փիլիսոփայություն և աստվածաբանություն: Նամակում Փիլիպպոսը բնութագրվում է որպես «հոգեծին գաւակ», իսկ կարդինալները՝ որպես «լոյս աշխարհի», որոնք կոչված են լուսավորելու «խաւարչոտ ժամանակիս մթութեան» (AP. SC. v. 4, p. 340):

Այս հռետորաբանորեն հագեցած դիմումը վկայում է ոչ միայն Իսահակի խոր հարգանքի, այլև նրա դիվանագիտական խորատեսության մասին: Թեև նամակում բացահայտ կերպով չի շոշափվում ծիսակարգի խնդիրը, սակայն ամբողջ ուղերձը կառուցված է այն գաղափարի շուրջ, որ կրթությունը պետք է ծառայի ոչ միայն անհատական առաջընթացին, այլև ազգային և դավանաբանական ինքնության պահպանմանը:

1697 թվականի սեպտեմբերի 4-ին Իսահակ Մակվեցին դիմում է Հռոմի Հավատասփյուռի Ժողովին՝ խնդրելով թույլտվություն, որպեսզի Փիլիպպոս Մակվեցուն հնարավորություն տրվի վերադառնալ հայրենիք և ձեռնադրվել քահանա՝ ըստ հայկական ծիսակարգի (AP. SC. v. 4, f. 487): Այս դիմումը առանձնահատուկ կարևորություն ունի, քանի որ բացահայտում է Մակվեցու դիրքորոշումը՝ կապված ազգային ծիսակարգի և եկեղեցական հեղինակության պահպանման հետ: Նա ընդգծում է, որ «դուրսէն ձեռնադրուած եկողները դժուարաւ ընդունելի կըլլան Ժողովուրդէն» [Կ. եպս. Ամատունի, 1983, 124]: Այս ձևակերպումը խոսում է այն մտահոգության մասին, որ առանց ազգային ծիսակարգի և տեղական հեղինակության, հոգևորականը կարող է կորցնել իր վստահելիությունը համայնքի աչքում՝ վտանգելով եկեղեցու ներսում ազգային ինքնության պահպանման գործընթացը:

Նամակում արտահայտվում է ոչ միայն ծիսական ինքնության պահպանման ձգտումը, այլև միջեկեղեցական փոխհարաբերությունների նուրբ հավասարակշռումը: Բարեդրացիական հարաբերություններ ունենալով Հռոմի հետ՝ Մակվեցին միաժամանակ պաշտպանում է հայ եկեղեցու ավանդույթները՝ փորձելով համադրել հավատքի համընդհանրությունը և ազգային առանձնահատկությունները: Հավատասփյուռի Ժողովը ընթացք է տալիս նրա խնդրանքին, և Փիլիպպոսը վերադառնում է Հայաստան՝ ձեռնադրվելով կուսակրոն քահանա հենց Իսահակ Մակվեցու ձեռամբ:

Նամակագրության հաջորդ փուլում Իսահակը հանդես է գալիս նաև որպես համայնքային կազմակերպիչ և միջեկեղեցական կապերի նախաձեռնող՝ ընդգրկելով նյութական աջակցության և եկեղեցաշինության հարցերը: 1685–1700 թվականներին, Ս. Թադեոսի վանքի առաջնորդի և վերատեսչի կարգավիճակով, նա մի շարք նամակներ է հղել Լիվոռնոյում, Վենետիկում, Ֆրանկֆուրտում և այլ քաղաքներում բնակվող հայ վաճառականներին՝ նպատակ ունենալով համախմբել նրանց աջակցությունը:

1685 թվականի հուլիսի 6-ի և 14-ի, ինչպես նաև 1688 թվականի մարտի 7-ի և մայիսի 27-ի նամակները պահպանվում են Վենետիկի թ. 1458 ձեռագրում [Սարգիսեան, հ. Բ, 1924, 1241-1245]: Այդ նամակներում Իսահակ Մակվեցին հայ վաճառականներից խնդրում է ֆինանսական աջակցություն Արտազի Ս. Թադեոս և Բագրևանդի (Ուչքիլիսա) Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիների նորոգման համար: Նա մանրամասնորեն ներկայացնում է սրբավայրերի ավերակված վիճակը, շինարարական աշխատանքների ընթացքը և ֆինանսական դժվարությունները: Մակվեցին ընդգծում է, որ Ուչքիլիսան այն վայրն է, որտեղ մկրտվել է Տրդատ թագավորը, և որտեղ կանգնեցվել է «խաչ լուսակաղմն», իսկ Ս. Թադեոսի վանքը, երկար ժամանակ մնալով «խախտեալ եւ քայքայեալ», նորոգվել է Սարգիս վարդապետի և այլ հոգևորների օգնությամբ, սակայն նյութական պակասի պատճառով մնացել է «անզարդ»:

Նամակներում մանրամասնորեն նշվում են անհրաժեշտ ծիսական պարագաները՝ շուրջառ, խաչ, բուրվառ, զգեստներ, զարդարանքներ: Իսահակը տեղեկացնում է, որ Թավրիզի եկեղեցու հոգևորական Տեր Խաչիկը, որպես նվիրակ, ուղարկվել է Եվրոպա՝ հանգանակության նպատակով: Նրա անունը բազմիցս հիշատակվում է որպես վստահելի անձ, ում պետք է փոխանցել նվիրատվությունները:

Նամակներում առանձնացվում են մի շարք ազդեցիկ բարերարներ՝ խոջա Գրիգորը, Պարոն Աղան և «մեծամեծ եւ անուանի տոլվաթաւորներ», որոնցից ակնկալվում է և՛ նյութական, և՛ բարոյական աջակցություն: Իսահակը շեշտում է, որ եկեղեցաշինությունը ոչ միայն ծիսական անհրաժեշտություն է, այլև ազգային ինքնության վերականգնման և համայնքային համախմբման միջոց:

1685 թվականի հուլիսի 6-ի նամակում ներկայացվում է Տեր Խաչիկի ֆինանսական ծանր դրությունը: Նրա փեսան, փոխ առնելով գումարներ, վատնել էր դրանք Ֆրանկֆուրտում, իսկ պարտավորությունները մնացել էին Տեր Խաչիկի վրա: Արդյունքում վերջինս ստիպված հեռացել էր Թավրիզի եկեղեցուց: Իսահակը դիմում է Պարոն Աղային՝ խնդրելով աջակցել «ժողովք եւ ողորմութիւն առնելով» (Վենետիկ, 1458, թ. 125ա-126ա):

1686 թվականի հունիսի 20-21-ին նույն խնդրանքով Իսահակը դիմել էր Հռոմի կարդինալներին՝ ներկայացնելով իր աղերսը որպես «խոնարհ դիմօք երկրպագութիւն» և հույս ունենալով, որ Տեր Խաչիկի տառապանքները «վասն Քրիստոսի» արժանի կլինեն Սրբազան Աթոռի ուշադրությանը: Նա նշում է, որ Ֆրանսուա Փիքեն՝ Հռոմի դեսպանը Պարսից Շահի մոտ, տեղյակ էր Խաչիկի վիճակից և միջնորդել էր՝ նրան ուղարկելով Հռոմ՝ օգնություն ստանալու նպատակով (AP. SC. v. 4, p. 205):

1700 թվականի հունիսի 11-ին Իսահակը նամակ է հղում Լիվոռնոյի հայ մեծատոհմ վաճառական Պարոն Աղային՝ արձագանքելով վերջինիս՝ Հռոմի Սուրբ Եկեղեցու հետ միաբանության և Լիվոռնոյում հայկական եկեղեցի կառուցելու նախաձեռնությանը (AP. SC. V.4, p. 633): Իսահակը վկայում է, որ Նահապետ կաթողիկոսի ներկայությամբ ընթերցվել է Աղայի նամակը, որը մեծ ուրախություն է պատճառել թե՛ կաթողիկոսին, թե՛ եպիսկոպոսներին ու վարդապետներին: Կաթողիկոսը ցանկացել է պատասխանել և քաջալերել Աղային՝ գործը ամբողջությամբ իրականացնելու համար, ինչպես նաև

պատրաստել ընծաներ՝ Զմյուռնիայի եպիսկոպոսի միջոցով Հռոմի Սրբազան Պապին փոխանցելու նպատակով: Սակայն վանքերի և եկեղեցական կառույցների անակնկալ ավերումը խոչընդոտել է այդ ծրագիրը: Սահակը վստահություն է հայտնում, որ արգելքների վերացումից հետո Աստծո օգնությամբ նախաձեռնությունը կկատարվի ամբողջությամբ:

Նամակագրության այս փուլը առանձնանում է մի քանի առանցքային շերտերով՝ Եվրոպայի հայ վաճառականների ներգրավումը եկեղեցաշինական նախաձեռնություններին, միջեկեղեցական կապերի ամրապնդում, ինչպես նաև ժամանակաշրջանի քաղաքական և սոցիալական խոչընդոտների արձանագրում: Իսահակ Մակվեցու գործունեությունը դուրս էր գալիս կրթական և ծիսական շրջանակներից՝ ընդգրկելով նաև համայնքային կազմակերպում և միջազգային կապերի հաստատում: Նրա նամակագրությունը վկայում է, որ ԺԷ դարի վերջում եկեղեցաշինական նախաձեռնությունները հնարավոր էին միայն միջազգային համագործակցության պայմաններում՝ ներառելով տարբեր դերակատարների մասնակցություն և փոխադարձ աջակցություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Իսահակ Մակվեցին ԺԷ դարի երկրորդ կեսի հայ եկեղեցական և մշակութային պատմության առանցքային գործիչներից է: Նրա գործունեությունը ընդգրկում էր ոչ միայն հոգևոր և կրթական ոլորտները, այլև համայնքային կազմակերպում և միջազգային կապերի հաստատում՝ վերածվելով համապարփակ առաքելության:

2. Նրա նամակագրությունը, ուղղված Հռոմի Հավատասփյուռի Ժողովին, Ուրբանյան վարժարանի ղեկավարությանը և եվրոպացի հայ վաճառականներին, բացահայտում է մի գործչի, որի առաքելությունը դուրս էր գալիս Ս. Թադեոսի վանքի սահմաններից: Մակվեցին հանդես էր գալիս որպես էկումենիկ մտածող, որը, հավատարիմ մնալով Հայ եկեղեցու դավանությանը և ծիսակարգին, միաժամանակ հաստատում էր հոգևոր հաղորդակցություն Հռոմի Սուրբ Աթոռի հետ՝ առանց դավանափոխության: Նրա սան Փիլիպպոս Մակվեցին, Ուրբանյան վարժարանում ուսանելով, դառնում է այս համագործակցության խորհրդանիշ:

3. Եվրոպայի հայ վաճառականներին ուղղված նամակները, որոնցում Մակվեցին խնդրում էր աջակցություն եկեղեցիների վերականգնման համար, վկայում են նրա խորապես եկեղեցապաշտ և առաքելամիտ մտածողության մասին: Նրա համար եկեղեցու վերականգնումը դիտվում էր ոչ միայն որպես ծիսական շինարարություն, այլև որպես հավատքի վերակազմակերպման, համայնքի ինքնության ամրացման և ազգային հիշողության պահպանման միջոց:

4. Հռոմի Պապ Իննովկենտիոս ԺԱ-ի կողմից Իսահակ Մակվեցուն ուղղված աղերսագիրը վկայում է նրա միջազգային ճանաչման և հեղինակության մասին՝ որպես Հայ եկեղեցու ներկայացուցիչ, որը արժանացել էր Սուրբ Աթոռի ուշադրությանը և վստահությանը: Սակայն, չնայած նրան, որ Մակվեցին դիտարկվում էր որպես Ամենայն

Հայոց կաթողիկոսի իրավահաջորդ, նրա ընտրությունը խոչընդոտվեց եկեղեցական երկփեղկման, քաղաքական բարդությունների և Հռոմի հետ ունեցած կապերի շուրջ առաջացած կասկածների պատճառով:

SUMMARY

Isaak Makvetzi was a prominent yet relatively understudied figure in the ecclesiastical and cultural history of the Armenian Church during the second half of the 17th century. Substantial information regarding his activities is preserved in the manuscripts of St. Thaddeus Monastery in Artaz, as well as in his correspondence addressed to the Congregation for the Propagation of the Faith in Rome, the administration of the Urban College, and Armenian merchants across Europe. These letters, housed in the Vatican Apostolic Archive and manuscript no. 1458 of the Venice Matenadaran, illuminate Makvetzi's multifaceted role as a spiritual leader, patron of educational initiatives, and diplomatic mediator. He is portrayed as an ecumenical thinker who remained faithful to the doctrines and liturgical practices of the Armenian Apostolic Church while fostering spiritual dialogue with the Holy See, without undergoing confessional conversion. His disciple, Philippus Makvetzi, who studied at the Urban College, became a symbolic figure of this collaboration. The letters addressed to Armenian merchants reflect Makvetzi's organizational and missionary vision, wherein church restoration is conceptualized not merely as architectural renewal but as a means of revitalizing faith, reinforcing communal identity, and preserving national memory. The supplicatory letter sent to Makvetzi by Pope Innocent XI attests to his international recognition and authority. Nevertheless, despite being considered a potential successor to the Catholicos of All Armenians, his election was obstructed by internal ecclesiastical divisions and political complexities.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամատունի Կ. եպս., ԺԷ դարու երեւելի վարդապետներ, Վենետիկ, Ս. Ղազար տպ., Վենետիկ, 1989, 232 էջ:
2. Ամատունի Կ. եպս., Սահակ վրդ. Մակունցի // «Բազմավեպ», 1983, թ. 1-4, Ս. Ղազար տպ., Վենետիկ, էջ 98-131:
3. Զաքարիա սարկավագ Քանաքեռցի, Պատմագրութիւն, հ. Բ, Վաղարշապատ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպ., 1870, 336 էջ:
4. Հախնազարյան Ա., Արտագի երեք վանքերը, Երևան, 2012, ՀՀՈՒՀ հրատ., Երևան, 351 էջ:
5. Ոսկեան Հ., Արտագի վանքը // «Հանդես Ամսօրեայ», 1941, թ. 1-6, Մխիթարյան տպ., Վիեննա, էջ 33-58:
6. Ութուջյան Ա., Եղիազար Ա. Այնթափցի, Ամենայն Հայոց Կաթողիկոսներ, Հայ Եկեղեցու հանրագիտարան, պրակ Ա., Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպ., 2008, 252 էջ:
7. Սարգիսեան Բ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին ի Վենետիկ, հ. Բ, Վենետիկ, 1924, Վենետիկ, Ս. Ղազար տպ., 1312 էջ:
8. Ստեփանոս Լեհացի, Ժամանակագրութիւնք կամ Տարեկանք Եկեղեցականք, Վիեննա, Մխիթարյան տպ., 1964, 231 էջ:

9. Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, կազմեց՝ Մ. վրդ. Քէշիշեան, Վիեննա, Մխիթարեան տպ., 1964, 809 էջ:
10. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Բ, Անթիլիաս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, 2001, 1032 էջ:

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ. ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՈՒՂԵՆԻՇ

Բանալի բառեր՝ ազգային գրադարաններ, հայ-ֆրանսիական մշակութային հարաբերություններ, մշակութային ժառանգություն, հայագիտություն, գրադարանային համագործակցություն, թվայնացում, հնատիպ գրքեր, մշակութային դիվանագիտություն:
Keywords: national libraries, Armenian-French cultural relations, cultural heritage, Armenian studies, library cooperation, digitization, rare books, cultural diplomacy.

Հայաստանի և Ֆրանսիայի տևական հարաբերությունները նշանավորվել են ընդհանուր պատմության, գրականության ու արվեստի մեջ արմատավորված հարուստ մշակութային փոխանակումներով: Ֆրանսիան հայ մտավորականների, գրողների ու արվեստագետների համար դարձել է երկրորդ հայրենիք, ստեղծագործական ներշնչանքի աղբյուր ու ապաստան: Միևնույն ժամանակ, ֆրանսիական մշակույթը, գրականությունն ու լեզուն խորապես ներթափանցել են հայկական մտավոր-մշակութային կյանք: Այս փոխազդեցությունը ծնել է պատմական, գրական, գեղարվեստական և գիտական արժեքավոր ժառանգություն, որը մինչ օրս պահպանվում է ու զարգանում: Հայաստանի և Ֆրանսիայի մշակութային երկխոսության արդյունավետությունը պայմանավորված է ընդհանուր արժեքներով ու փոխադարձ հարգանքով: Ֆրանսահայ համայնքի ակտիվ դերակատարությունը, Ֆրանկոֆոնիայի շրջանակներում համագործակցությունն ու մշակութային ժառանգության պահպանման ծրագրերը այս ոլորտի առանցքային ուղղություններն են: Մշակութային դիվանագիտությունը հնարավորություն է տալիս ոչ միայն ներկայացնել մեր երկրների մշակութային հարստությունը, այլև կամուրջներ կառուցել հասարակությունների տարբեր սերունդների միջև:

Երկու երկրների ազգային գրադարանները, որոնք հանդես են գալիս իբրև մշակութային ժառանգության պահպաններ ու միջմշակութային երկխոսության հարթակներ, այդ կապերի զարգացման գործում ևս կարևոր դերակատար են: Ազգային մտավոր ժառանգությունը պահպանելուց զատ, այդ հաստատությունները ապահովում են դրա հասանելիությունը միջազգային գիտական համայնքի, հետազոտողների և լայն հանրության համար:

Ֆրանսիայի ազգային գրադարանը (Bibliothèque nationale de France, BnF)՝ հայկական ձեռագրերի, հազվագյուտ գրքերի և պատմական տեքստերի իր հարուստ հավաքածուով, տևականորեն եղել և է՝ Եվրոպայում հայագիտական ուսումնասիրությունների համար նշանակալի կենտրոն: Այդ հավաքածուները հարուստ են Ֆրանսիայում հրատարակված հայալեզու գրքերով և պարբերականներով: Հատկանշական է, այս տարին նշանավորվեց

Մարսելում հրատարակած աշխարհաբար առաջին գրքի՝ ԱՐՀԵՍՏ ՀԱՄԱՐՈՂՈՒԹԵԱՆ 350 ամյակով (Մարսել; տպագր. Սոդոմոն Լևոնյանի; տպ. Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1675)՝ խորհրդանշելով հայ-ֆրանսիական մտավոր կապերի նոր փուլի սկիզբը:

Ֆրանսիայի ազգային գրադարանի հայկական ժառանգության հավաքածուները հարուստ են ու բազմազան. 350 ձեռագրեր (ամենահին փաստաթղթերը թվագրվում են հայ գրչության ծնունդից), 16-18-րդ դդ. 400 հայկական տպագիր աշխատությունների ժողովածու, մենագրությունների, պարբերականների ժողովածու (ներառյալ Ֆրանսիայի հայկական միությունների կողմից 1920-ականներից սկսած հրատարակված հարյուրավոր պարբերականներ), լուսանկարներ, հնագույն ու միջնադարյան մետաղադրամներ: Ընդհանուր առմամբ, Ֆրանսիայի ազգային գրադարանում պահպանվում են ավելի քան 1000 հայերեն հատորներ՝ բաշխված մի քանի բաժիններում: Այս բացառիկ ժողովածուները պատկերում և փաստում են Հայաստանի և Ֆրանսիայի հարաբերությունների պատմությունը՝ խաչակրաց արշավանքներից մինչև մեր օրեր, ֆրանսերեն և հայերեն:

Հայաստանի ազգային գրադարանը, իր հերթին, պահպանում է ֆրանսիական գրականության և մշակույթի նշանակալի հետքեր՝ ֆրանսերեն հնատիպ գրքերի հարուստ և ուրույն հավաքածուի տեսքով. 2692 միավոր ֆրանսերեն հնատիպ գիրք՝ հրատարակված մինչև 1825 թ.: Հավաքածուն ներառում է ֆրանսիական դասական և ժամանակակից գրականության բազմաթիվ արժեքավոր գործեր, հազվագյուտ հրատարակություններ, գիտական և պատմական աշխատություններ: Ֆրանսերեն հավաքածուն սկզբնավորվել է 19-րդ դարի սկզբից՝ արական գիմնազիայի հավաքածուից և շարունակաբար համալրվել է թե՛ նվիրատվությունների, թե՛ ֆրանկոֆոն երկրների հետ փոխանակման ծրագրերի շնորհիվ:

Որպես մշակութային կենտրոններ՝ Հայաստանի և Ֆրանսիայի ազգային գրադարանները մտավոր ժառանգության պահպանման ու տարածման համար ավելի ու ավելի են համատեղում ջանքերը, հատկապես թվայնացման նախագծերի, նյութերի փոխանակման, համատեղ ցուցահանդեսների, փորձի փոխանակման, ակադեմիական գործընկերությունների միջոցով:

Թվային տեխնոլոգիաների դարաշրջանում մշակութային ժառանգության թվայնացումն ազգային գրադարանների համար առաջնահերթություն է: Մեր երկու հաստատությունները համագործակցում են հավաքածուների թվայնացման, մետատվյալների ստեղծման, թվային պահոցների կառավարման ոլորտներում: Նպատակը հավաքածուները լայն հանրությանը մատչելի դարձնելն է՝ անկախ օգտվողների գտնվելու աշխարհագրական վայրից:

Հայաստանի ազգային գրադարանի միջազգային համագործակցության կարևոր տարրն է դարձել նաև 2025 թվականին Թվային ֆրանկոֆոն ցանցին (Réseau Francophone Numérique – RFN) միանալը: RFN-ը, որը ստեղծվել է 2006 թվականին Ֆրանսիայի ազգային գրադարանի և Քվեբեքի ազգային գրադարանի ու արխիվների համատեղ նախաձեռնությամբ, պաշտոնապես մեկնարկել է 2008 թվականին և այսօր միավորում է 32 մշակութային-ժառանգական հաստատություն՝ տեղակայված 22 երկրում: 2017

թվականին ցանցը ձեռք է բերել իրավաբանական անձի կարգավիճակ՝ դառնալով բելգիական իրավունքի ներքո գործող միջազգային ոչ առևտրային կազմակերպություն: Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (OIF) աջակցությամբ RFN-ը հանդիսանում է համագործակցության արտոնյալ հարթակ, որը նպաստում է փորձի և գիտելիքի փոխանակմանը՝ վերապատրաստումների կազմակերպման, ուսուցողական գործիքների մշակման և անդամների միջև տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս ցանցին Հայաստանի ազգային գրադարանի մասնակցությունը բացում է նոր հեռանկարներ թվային տեխնոլոգիաների կիրառման, մշակութային ժառանգության թվայնացման և ֆրանսախոս համայնքի հետ համագործակցության ոլորտներում:

Հայաստանի ազգային գրադարանը վերջին տարիներին աշխուժորեն գործակցում է Ֆրանսիայի համապատասխան կառույցների հետ՝ կազմակերպելով հայ-ֆրանսիական մշակութային հարաբերություններին նվիրված միջոցառումներ, թեմատիկ ցուցահանդեսներ, և արդեն՝ գիտաժողովներ:

Ապրիլի 29-30-ը Հայաստանի ազգային գրադարանում տեղի ունեցավ «Ֆրանսիա-Հայաստան. պատմական և մշակութային երկխոսություն» միջազգային գիտաժողովը, որն իր նշանակությամբ նախադեպը չունեցող իրադարձություն էր: Երկօրյա այս գիտական միջոցառումը նպատակ ուներ համապարփակ ներկայացնել Ֆրանսիայի և Հայաստանի միջև պատմականորեն ձևավորված բազմաշերտ մշակութային հարաբերությունները և նշանավորեց Հայաստանում Ֆրանկոֆոնիայի երկամսյակի եզրափակումը:

Ֆրանսիայի ազգային գրադարանի նախագահ Ժիլ Պեկուն գտաժողովի գլխավոր խոսնակներից էր: Նա իր ելույթում անդրադարձավ Ֆրանսիայի ազգային գրադարանի հայկական հավաքածուների բազմազանությանն ու դրանց նշանակությանը երկկողմ համագործակցության համար, ինչպես նաև ներկայացրեց երկու երկրների հաստատությունների միջև մշակութային ժառանգության և գիտական համագործակցության հեռանկարները:

Ֆրանսիայի ազգային ժառանգության ինստիտուտի տնօրեն Շառլ Պերսոնան հանդես եկավ «Մշակութային ժառանգության պահպանման ոլորտում հայ-ֆրանսիական համագործակցության հինգ տարիները» թեմայով զեկույցով: Գիտաժողովի պատվավոր հյուրերից էր նաև Ֆրանսիայի Ռոմանի շրջանի Երաժշտության և պարի ազգային դպրոցի տնօրեն, Ստեփան Էլմասի հիմնադրամի և Դրոմի շրջանի նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Ալեքսանդր Սիրանոսյանը, որը հեղինակել է հայկական թեմաներով եվրոպական օպերաներին նվիրված հրատարակությունը (*Les métamorphoses de Tigrane / Alexandre Siranossian; avec la collaboration de Maxime K. Yevadian; préface de Reinhard Goebel. - Lyon: Sources d'Arménie, 2014*):

Գիտաժողովին մասնակցեց Խարտիայի ազգային դպրոցի փոխտնօրեն Էլզա Մարգեն-Ամոնը, ով ներկայացրեց Ֆրանսիայի՝ արխիվագիտության, ձեռագրագիտության, դիվանագիտության, պալեոգրաֆիայի, պատմական աղբյուրագիտության և գրադարանագիտության ոլորտներում մասնագիտացած

ամենահեղինակավոր բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկը: Իր ելույթում նա անդրադարձավ նշված գիտակարգերի արդի զարգացումներին, ինչպես նաև եվրոպական առաջատար գիտակրթական հաստատությունների և ազգային հիշողության պահպանման ինստիտուտների միջև համագործակցության խորացման հնարավորություններին՝ ընդգծելով մասնագիտական պատրաստվածության և գիտական հետազոտությունների համադրման կարևորությունը ժամանակակից գիտական միջավայրում:

Համակարգչային նշաճանաչման մասնագետ Շահան Վիդալ-Գորենը խոսեց Ֆրանսիայի ազգային գրադարանի հայերեն ձեռագրերի և արխիվների մշակման մասին: Նա Փարիզի գիտությունների և գրականության համալսարանի Խարտիայի ազգային դպրոցի (L'École nationale des Chartes) «Թվային հումանիտար գիտություններ» մագիստրոսական ծրագրի ղեկավարն է, նաև «Կալֆա» տեխնոլոգիական կենտրոնի նախագահն ու հիմնադիրը, որը մասնագիտացած է արհեստական բանականության և ժառանգության պահպանման ոլորտում, ներգրավված է հայկական ռեսուրսների թվայնացման բազմաթիվ նախագծերում:

«Ֆրանսիա-Հայաստան. պատմական և մշակութային երկխոսություն» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողովի շրջանակում Հայաստանի ազգային գրադարանը Համագործակցության հուշագրեր ստորագրեց Ֆրանսիայի ազգային գրադարանի, Խարտիայի ազգային դպրոցի, ինչպես նաև «Կալֆա» ժամանակակից տեխնոլոգիաների ֆրանսիական կազմակերպության հետ:

Հայաստանից գիտաժողովին մասնակցեցին և ելույթ ունեցան մշակույթի մի շարք գործիչներ՝ հրատարակիչներ, խմբագիրներ, պատմաբաններ, գրականագետներ, լեզվաբաններ, կինոգետներ, երաժշտագետներ, հայագետներ և ոլորտի այլ ներկայացուցիչներ:

Գրադարանի մեծ ցուցասրահում առաջին անգամ ներկայացված էին ՀԱԳ Անձեռնմխելի գրականության բաժնի՝ Ֆրանսիայում հրատարակված հայերեն և ֆրանսերեն հնատիպ գրականության և մամուլի բացառիկ նմուշներ:

Հայաստանի ազգային գրադարանի Անձեռնմխելի գրականության բաժնում պահպանվում է 2692 միավոր ֆրանսերեն գրականություն, որից մի փոքր մաս ցուցադրված է մեծ ցուցասրահում: Ցուցադրված ամենահին ֆրանսերեն գիրքը «ZONORAS JEAN» (LES HISTOIRES ET CRONIQUE DU MONDE. - PARIS: PIERRE L' HUIILLIER: 1583, 989 p.) գիրքն է: Հավաքածուում մեծ թիվ են կազմում բառարանները, հանրագիտարանները, պատմական և ճանապարհորդական աշխատություններ:

Հավաքածուում պահպանվող ֆրանսերեն ամենավաղ շրջանի գիրքը 1552 թվականին Փարիզում հրատարակված «Համընդհանուր տիեզերագնացություն» գիրքին է: 1739 թվականին Նիդեռլանդների Հաագա քաղաքում տպագրված Եթովպիացիների և հայերի քրիստոնեության պատմությունը ևս ցուցադրված գրքերի ցանկում էին: 1702 թվականին Փարիզում տպագրված Ֆրենսիս Բեկոնի «Նոր Ատլանտիդա» աշխատությունը, Դենի Դիդրոյի «Հանրագիտարան»-ի 4-րդ հատորը՝ տպագրված Փարիզում 1754

թվականին, 1787-ին տպագրված Պլուտարքոսի ստեղծագործությունները ևս ներառված էին ցուցադրվող գրականության մեջ:

Երկօրյա գիտաժողովի ընթացքում առանձին ցուցասրահում տեղի ունեցավ հայաստանյան հրատարակչությունների («Անտարես», «Նյումեզ», «Անկյունաքար», «Էդիթ Պրինտ», «Ակտուալ արվեստ», «Նահապետ» հրատարակչությունները և «Ֆիմադարան» ՀԿ) գրքերի ցուցահանդես, որտեղ ներկայացված են հայ-ֆրանսիական առնչություններին նվիրված հրատարակություններ, ֆրանսիական գրականության թարգմանություններ և այլն:

Ֆրանսիայի և Հայաստանի ազգային գրադարանների միջև ձևավորված համագործակցությունը ներկայացնում է երկու երկրների մշակութային դիվանագիտության կարևորագույն բաղադրիչը: Այս համագործակցությունը հիմնված է դարերի ընթացքում ձևավորված մշակութային կապերի վրա և արտացոլում է երկու ժողովուրդների ընդհանուր ձգտումները գիտելիքի, մշակույթի և ժառանգության պահպանման ու տարածման գործում:

Ֆրանսիայի ազգային գրադարանի հայկական հավաքածուները հայագիտության և հայ-ֆրանսիական հարաբերությունների պատմության ու մշակութային փոխազդեցությունների ուսումնասիրության համար անգնահատելի արժեք են: Հայաստանի ազգային գրադարանի ֆրանսերեն հնատիպ հավաքածուն, իր հերթին, վկայում է ֆրանսիական մշակույթի ազդեցության և Հայաստանում եվրոպական գիտության ընկալման մասին: Թվայնացման նախագծերը, փորձի փոխանակումը, վերապատրաստման ծրագրերը, համատեղ ցուցահանդեսներն ու գիտական նախագծերը ցույց են տալիս համագործակցության դինամիկան և երկկողմ հանձնառությունը:

Ազգային գրադարանները գործում են որպես մշակութային կամուրջներ՝ խորացնելով երկրների միջև կապերը: Քանի որ աշխարհը գնալով դառնում է ավելի փոխկապակցված, հայ-ֆրանսիական գրադարանային գործակցության ապագան խոստանում է հետաքրքիր զարգացումներ մշակութային ժառանգությունը պահպանելու և տարածելու գործում՝ կարևորելով դրանց նշանակությունը երկու ազգերի համար և ազդեցությունը գլոբալ մշակութային դիվանագիտության վրա:

SUMMARY

